

ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԿԱՏԱԼՈԳ

CATALOG OF ARMENIAN MONUMENTS
INCLUDED IN THE LIST OF
UNESCO WORLD HERITAGE SITES



Խմբագիր՝ պատմ. գիտ. թեկնածու Կարինե Բազեյան
Editor: Candidate of historical sciences - Karine Bazeyan

Անգլերեն թարգմանություն՝ Սաթենիկ Հարությունյան
English translation: Satenik Harutyunyan

Գեղարվեստական ձևավորում՝ Սիմոն Սահակյան
Design by: Simon Sahakyan

«ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում ընդգրկված հայկական հուշարձանների կատալոգ» – Երևան, ՀՀ մշակույթի նախարարություն, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, 2018. – 65 էջ:

“Catalogue of Armenian monuments included in the list of UNESCO world heritage sites” – Yerevan, RA’s ministry of culture, “Service for the protection of historical environment and cultural museum-reservations” NCSO, 2018. – 65 pages.

Կատալոգում ներկայացված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում ընդգրկված հայկական հուշարձանները պատմական համառոտ տեղեկություններով, ինչպես նաև հորինվածքային, գեղարվեստական և կառուցողական-կոնստրուկտիվ սկզբունքների ընդհանուր բնութագրություններով: Այն նախատեսված է հայ և օտարազգի լայն հասարակության համար:

Armenian monuments involved in UNESCO’s world cultural heritage list with brief historical information, as well as general descriptions of compositional, artistic and constructive-structural principles are presented in the catalogue. It is addressed to both Armenian and foreign wide circle of public.

ISBN 978-9939-867-20-5

© ՀՀ մշակույթի նախարարություն
© RA’s Ministry of Culture

© «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ
© “Service for the protection of historical environment and cultural museum-reservations” NCSO





ԳԵՂԱՐԴԻ ՎԱՆՔ
THE MONASTERY OF GEGHARD

Գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Գողթ գյուղից 3 կմ հյուսիս-արևելք, Ազատ գետի Գողթ վտակի ձորալանջին, ժայռերով շրջափակված վեհատեսիլ վայրում: Միջնադարյան Հայաստանի հռչակավոր վանքերից էր, ուխտագնացության հայտնի սրբավայրերից, հոգևոր մշակույթի խոշոր կենտրոններից: Ունեցել է դպրանոց, հարուստ գրադարան, գրչության և այլ արհեստանոցներ: Մեզ են հասել Գեղարդում ընդօրինակված բազմաթիվ ձեռագրեր, որոնց մեծ մասը պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Վանքի գիտական և ուսումնական կյանքն առավել աշխուժացել է XIII դ.՝ վարդապետներ Հովհան Գառնեցու և պատմիչ գիտնական Մխիթար Այրիվանեցու օրոք: Գեղարդավանքը նաև միջնադարյան Հայաստանի կրոնական հարուստ հաստատություններից էր՝ նվիրատվությունների ճանապարհով ձեռք բերած ընդարձակ հողատարածություններ, գյուղեր, կալվածքներ, այգիներ, ջրաղացներ, ձիթհաններ, դրամ, եկեղեցական արժեքավոր սպասք և այլն:

Քարայրային կառույցների պատճառով սկզբնապես վանքը կոչվել է Այրիվանք, XIII դարից՝ վանքում պահված Սբ Գեղարդի պատվին՝ Գեղարդավանք:

Վանքի հիմնադրման ստույգ ժամանակը հայտնի չէ: Ըստ ավանդության IV դ. սկզբին Գրիգոր Լուսավորիչն այստեղ հիմնել է մենաստան՝ օգտագործելով բնական անձավները:

Գեղարդավանքի ժամանակագրության հետ կապված հայտնի է.

IV դ. այստեղ իր ամառանոցային հանգիստն է անցկացրել Ներսես Ա Պարթև կաթողիկոսը:

Վանքը՝ որպես ուսումնագիտական կենտրոն, մեծ հռչակ է ձեռք բերել դեռևս VIII դ., դպրապետ Գրիգոր Գռգիկի (Այրիվանեցի), ինչպես նաև՝ Սահակղուխտի ուսումնագիտական և երաժշտագիտական գործունեության շրջանում: Գրիգորն իր կրթությունն ստացել էր Աթենքում: Հայաստան վերադառնալուց հետո Այրիվանքում հիմնել էր երաժշտագիտական դպրոց: Վախճանվելուց հետո Գրիգոր Գռգիկը թաղվել է վանքում և ժողովրդի կողմից սրբացվել: Սահակղուխտը Դվինի կաթողիկոսարանի ավագերեց Սահակի դուստրն էր և մատենագիր, աստվածաբան, թարգմանիչ ու երաժիշտ Ստեփանոս Բ Սյունեցի եպիսկոպոսի քույրը: Ուսանելու նպատակով հաստատվել էր Այրիվանքում: Մասնագիտացել էր իբրև երաժշտագետ-երգահան: Ուշագրավ է, որ Սահակղուխտը հիշատակվում է ոչ միայն որպես փայլուն գիտելիքների տեր անձնավորություն, «առաջին ուսումնասեր կույս», այլև՝ «քահանայ կարգող»: Այսինքն, նա կրթել է մանուկներին և հասցրել նրանց քահանայական կարգի: Ի տարբերություն տղամարդ ուսուցիչների, Սահակղուխտը ուսուցումը վարել է վարագույրի հետևում՝ նստած՝ սաներից անտեսանելի դիրքում: VIII դ. հայ կնոջ դպրական-մանկավարժական գործունեությունը համաշխարհային քաղաքակրթության տարեգրության մեջ առաջին և եզակի արձանագրումն է:

841 թ. թողնելով հայրապետական աթոռը, Այրիվանքում է հաստատվել Հովհաննես Դ Ովայեցի կաթողիկոսը: Վերջինիս հաջորդած Հովհաննես Ե Դրասխանակերտցի կաթողիկոսը՝ խուսափելով արաբների հետապնդումից, ապաստանել է Գեղարդում, այնուհետև՝ Սևանի վանքում: Դրասխանակերտցուն հետապնդած արաբների մի գունդ հարձակվել է Այրիվանքի վրա, կոտորել միաբաններին, կողոպտել վանքի հարստությունը և ավերել կառույցները:

1181 թ. վանքում է եղել Աղվանից Ստեփանոս կաթողիկոսը: Ըստ Սբ. Աստվածածին կիսաժայռափոր եկեղեցու 1181 թ. արձանագրության, վանքին նվիրաբերվել են Սբ. Անդրեասի մասունքները: XII դ. վանքը ստացել է նաև բազմաթիվ այլ նվիրատվություններ՝ հողեր, այգիներ, դրամ:

XIII դ.-ից Գեղարդն անցել է հայ իշխան, զորավար Իվանե Չաքարյանի իշխանության ներքո:

1215 թ. կառուցվել է վանքի զխավոր՝ Սբ. Կաթողիկե եկեղեցին: 1215-1225 թթ. կառուցվել է Կաթողիկեի գավիթը:

The monastery is situated at 3 km north-east of the village of Goght in the Kotayk region of RA, on the canyon slopes of the Goght tributary of the Azat river, in a majestic place surrounded by rocks. It was one of the most famous monasteries of medieval Armenia, one of the important pilgrimage sites, one of the major spiritual centers. It had a theological seminary, rich library, manuscript-writing centers and etc. We have a wide variety of manuscripts copied in Geghard, most of which are preserved at the Matenadaran after St. Mesrop Mashtots. The scientific and educational life in the monastery became more active in the XIII century, in the time of the vardapet (teacher) Hovhan Garnetsi and scientist-historian Mkhitar Ayrivanetsi. The monastery of Geghard was also one of the rich religious institutions of medieval Armenia: large land parcels acquired through donations, villages, estates, orchards, water mills, dzit-hans (oil mills), money, valuable church utensils and so on.

Because of the cave structures, the monastery had been originally named Ayrivank, and from the XIII century on, it was renamed Geghardavank, in honor of St. Geghard kept in the monastery.

The exact date of the establishment of the monastery is unknown. According to tradition, in the early IV century, St Gregory the Illuminator established a monastery here, using natural caves.

Regarding the chronology of the Geghardavank, it is known:

In the IV century, Sb. Nerses A Partev spent his summer holiday here.

As an educational center, the monastery became famous still in the VIII century, during the period of educational and musical activities of the protonotary (dprapet) Grigor Grzik (Ayrivanetsi) and Sahakdukht. Grigor received his education in Athens. After returning to Armenia, he founded a music school in Ayrivank. After his death, Grigor Grzik was buried at the monastery and recognized as a saint. Sahakdukht was the daughter of Sahak arch-priest at the Catholicosate in Dvin and sister of the writer, theologian, translator and musician Stepanos B Syunetsi. She moved to Ayrivank to study. She specialized as a musicologist-composer. It is noteworthy that Sahakdukht was characterized not only as a person with excellent knowledge, «the first eager to learn virgin», but also as «ordainer». In other words, she educated children and led them to the priesthood. Unlike the male teachers, Sahakdukht taught sitting behind the curtain, in a position invisible to students. The scholastic-pedagogical activity of an Armenian woman in the VIII century is the first and unique case in the history of world civilization.

After leaving the patriarchal throne in 841, Catholicos Hovhannes D Ovayetsi settled in Ayrivank. The following Catholicos Hovhannes E Draskhanakerttsi, avoiding the persecution by the Arabs, took refuge in Geghard, then in the monastery of Sevan. A bunch of Arabs pursued Draskhanakerttsi attacked Ayrivank, killed the monks, looted the wealth of the monastery and destroyed the buildings.

In 1181 Catholicos Stepanos from Aghvan visited the monastery. According to the record of 1181 of the chapel of St. Astvatsatsin (Holy Mother of God) (partially hewed in the rock), the relics of St. Andreas were transferred to the monastery. In XII century, the monastery received also many other donations: lands, orchards and money.

From the XIII century, Geghard was under the rule of the Armenian prince Ivane Zakarian.

The main Katoghike church was constructed in 1215. The gavit (adjacent narthex) was constructed in 1215-1225.

XIII դ. Խաղբակյան Պռոշ իշխանը Իվանեի որդի Ավագ Չաքարյանից գնել է Գեղարդի վանքը՝ նպատակ ունենալով վերածել այն տոհմական տապանատան, կառուցել է տվել վանքի ժայռափոր առաջին և երկրորդ եկեղեցիներն ու տապանատունը:

Խորհրդային տարիներին Գեղարդավանքը բարեկարգվել ու վերանորոգվել է՝ մասամբ պետական, մասամբ Էջմիածնի կաթողիկոսարանի հոգաձությամբ: Մասնակիորեն վերականգնվել է 1934 և 1940 թթ.: 1960-1980-ական թթ. կատարվել են համալիրի հիմնանորոգման աշխատանքները: 1960 թ. վերակառուցվել է վանքի դարպասը, 1968 թ.՝ վանատան երկհարկ շենքը, 1978 թ.՝ սեղանատունը, պարսպին կից շինությունները: 1987 թ. ավարտվել է Կաթողիկե եկեղեցու և գավթի տանիքների բազալտով սալարկումը: Ստորգետնյա ջրերի ներթափանցումը կառույցներ կասեցնելու նպատակով, վանքի հյուսիսային կողմի ամբողջ երկարությամբ կառուցվել է թունել: Նորոգվել է նաև Գեղարդ տանող խճուղին, որի եզրին կանգնեցվել է «Գեղարդ» մակագրությամբ և առյուծի քանդակով կոթող-ուղենիշ (1958 թ., ճարտ.՝ Ռ. Իսրայելյան, քանդ.՝ Ա. Հարությունյան):

2000 թ. Գեղարդի վանքն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում:

Գեղարդավանքի վերգետնյա և ժայռափոր շինությունները կազմում են մեկ ամբողջություն: Համալիրի տարածքում XII դ. առաջ ստեղծված կառույցներ չեն պահպանվել: Հիմնական հուշարձանախմբի մեջ մտնում են Կաթողիկե գլխավոր եկեղեցին, գավիթը, ժայռափոր երկու եկեղեցիները, ժամատուն-դամբարանը, խցերը: Պարսպափակ հատվածից դուրս Աբ. Աստվածածինն է:



ԵԿԵՂԵՑԻ ԱԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ (XII դ.)

Գտնվում է համակառույցի արևմտյան կողմում, պարսպապատից դուրս: Պահպանված կառույցներից հնագույնն է: Կիսավիմափոր փոքր շինություն է (հիշատակվում է նաև մատուռ ձևով): Գոյություն է ունեցել դեռևս XII դ. երրորդ քառորդում, ինչի ապացույցն են պատերին պահպանված 1177 և 1181 թթ. արձանագրությունները: 1257-1258 թթ. նորոգվել է Պռոշ իշխանի կողմից և ներքուստ որմնանկարվել: Պահպանվել են որմնանկարների պատամիկները:

In the XIII century, the prince Prosh Khaghbakyan bought the monastery of Geghard from Avag Zakaryan (the son of Ivane), and with the aim of turning it into a family tomb, constructed the first rock-cut and second churches and the graveyard.

In the Soviet period Geghardavank was reconstructed and renovated, partially with the support of the state and Catholicosate of Etchmiadzin. It was partially renovated in 1934 and 1940. The work of reconstruction of the complex was carried out in the 1960s-1980s. In 1960 the gate of the monastery was reconstructed; in 1968 – the two-storey residential structure; in 1978 - the dining-hall and constructions adjacent to the wall. In 1987, the basalt paving of the roofs of the narthex and Katoghike church was completed. In order to prevent the inflow of groundwater into the structures, a tunnel was built along the northern side of the monastery. The highway leading to Geghard was also renovated, on the verge of which there is a monument-landmark with an inscription «Geghard» and carved lion. (1958, the arch. R. Israyelyan, sculpt. A. Harutyunyan).

In 2000 the Monastery of Geghard was included in the UNESCO World Heritage List.

The overground and rock-cut structures of Geghardavank together form a cohesive whole. On the territory of the complex, there are no preserved structures constructed before the XII century. The principal group of monuments includes the Katoghike church, gavit (an adjacent narthex), two rock-cut churches, fore-church-sepulcher and cells. The chapel of St. Astvatsatsin is located outside the fence.



THE CHAPEL OF ST. ASTVATSATSIN (XII C.)

The chapel is located on the western side of the building, outside the fence. It is the oldest preserved structure. It is a small, partially hewed in the rock, structure (also mentioned as a chapel). It existed still in the in the third quarter of the XII century, which is evidenced by inscriptions of 1177 and 1181 engraved on the wall. In 1257-1258 the chapel was reconstructed by the prince Prosh and decorated with frescoes. Fragments of frescoes have been preserved.

ԵԿԵՂԵՑԻ ԿԱԹՈՂԻԿԵ (1215 Թ.)

Վանքի գլխավոր եկեղեցին Է: Կառուցվել է Բարսեղ վարդապետի վանահայրության օրոք: Արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև, չորս անկյուններում ավանդատներով գմբեթավոր շինություն է: Գմբեթը խարսխված է սլացիկ թմբուկի վրա: Գմբեթատակ քառակուսուց թմբուկի կորին անցումն իրականացված է առագաստների միջոցով: Ինտերիերն ունի XII-XIII դդ. հայկական ճարտարապետական արվեստին բնորոշ մշակում: Հարուստ հարդարանք ունեն հատկապես կառույցի թմբուկն ու հարավային շքամուտքը: Եկեղեցու արևելյան և հարավային ճակատներն ակոսված են եռանկյունաձև հատվածքի զույգ «հայկական խորշերով»:

ԳԱՎԻԹ (1215-1225 ԹԹ.)

Կից է Սբ. Կաթողիկե եկեղեցուն արևմուտքից: Ուղղանկյուն հատակագծով ընդարձակ շինություն է: Պատկանում է կենտրոնագմբեթ քառասյուն գավիթների տիպին: Չորս սյուները միմյանց կապող և դեպի հանդիպակաց պատերը ձգվող կամարները ներքին տարածությունը բաժանում են կենտրոնական՝ մեծ և եզրային՝ ութ փոքր հատվածների: Կենտրոնական հատվածը, որը կազմում է ողջ հորինվածքի գլխավոր առանցքը, ծածկված է մեծ վարպետությամբ իրականացված ստալակտիտազարդ թաղով: Հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան անկյուններում առկա են երկհարկ ավանդատներ, որոնցից մեկը նվիրված է Թադևոս առաքյալին: Կառույցի հյուսիսային պատին փոխարինում է բնական ժայռը: Շքամուտքն ունի ճոխ հարդարանք:

Գավթի ներսում, ճարտարապետորեն ձևավորված բարձր պատվանդանի վրա կանգնեցված է Տիմոթե և Մխիթար քարգործ վարպետների 1213 թ. կերտած բարձրարվեստ խաչքարը:



ԺԱՅՈՒՓՈՐ ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՑԻ (1230-1250 ԹԹ.)

Փորված է գավթի հյուսիս-արևմտյան կողմում: Մուտքը բացված է գավթից: Երկու զույգ խաչվող կամարներով և ստալակտիտազարդ գմբեթով փոքր եկեղեցի է: Աչքի է ընկնում ստալակտիտների նրբագեղ քանդակների կատարման մեծ վարպետությամբ: Հյուսիսային պատի տակ բխում է ավանդաբար հրաշագործ համարվող աղբյուր: Արևելյան պատին, գմբեթի մոտ, փորագրված է կառուցող ճարտարապետի՝ Գալձագի անունը:

ԺԱՅՈՒՓՈՐ ԵՐԿՐՈՐԴ ԵԿԵՂԵՑԻ (1283Թ.)

Ա ՊՈՒՈՇՅԱՆՆԵՐԻ ԺԱՅՈՒՓՈՐ ՏԱՊԱՆԱՏՈՒՆ (1283 Թ.)

Գավթի հյուսիս-արևելյան դուռն առաջնորդում է դեպի ուղղանկյուն հատակագծով Պռոշյանների տապանատուն, որից արևելք վիմափոր երկրորդ եկեղեցին է: Տապանատան հյուսիսային պատին Պռոշյան իշխանների տոհմական զինանշանի բարձրաքանդակն է՝ եզան

THE KATOGHIKE CHURCH (1215)

It is the main church of the monastery and was built by the vardapet Barsegh. It is a rectangular on the outside and cross-shaped inside, domed structure with a sacristy in each of the four corners. The dome is anchored on a slender drum. The passage from the dome-bearing square to the curve of the drum was realized by means of the sails. The interior ornamentation was elaborated by the architectural art style of the XII–XIII cc. The drum and the southern portal are especially richly decorated. There are a couple of triangular «Armenian niches» on the eastern and southern facades of the church.

THE GAVIT (1215-1225)

The gavit (narthex) is adjacent to the Katoghike church from the west. It is a spacious structure with a rectangular plan. It belongs to the type of centralized, four-pillared narthexes. The arches, connecting the four pillars and stretching towards the opposite walls, divide the inner space into eight (large and edge) central sections. The central section, which forms the basic axis of the construction, is covered with a gracefully-sculptured vault made of stalactite. In the North-East and South-East corners there are two-storeyed sacristies, one of which is dedicated to Apostle St. Thaddeus. The northern wall of the structure is a rough rock wall. The portal of the church is richly decorated.

Inside the gavit, there is a Khachkar (stone cross) created by the masters, creators of khachkars, Timot and Mkhitar in 1213 and erected on a high architecturally modeled pedestal.



THE FIRST ROCK-CUT CHURCH (1230-1250)

It is located at the north-western side of the narthex. Entrance is from the narthex. It is a small church with two small crossing arches and a dome fully decorated with stalactites. The church is distinguished by expertly crafted graceful sculptures. Under the northern wall, there is a holy water spring. The name of the architect Galdzag, who constructed the church, is engraved on the eastern wall, near the dome.

THE SECOND ROCK-CUT CHURCH (1283) AND PROSHIANS' SEPULCHER (1283)

The northeastern gate leads to the rectangular sepulcher of the Proshians, to the east of which is the second rock-cut church. On the northern wall of the sepulcher there is a sculpture of a bull's head, which keeps two chained lions, and lower an eagle, keeping a ram in

գլուխ, որը պահում է շղթայակապ երկու առյուծ և թևատարած արծիվ՝ ճիրաններում գառ: Պատերին առկա են այլ պատկերաքանդակներ:

Վիմափոր երկրորդ եկեղեցին պատկանում է գմբեթավոր դահլիճ տիպին: Հարդարված է խաչերով և աղավնիների, սլացիկ շարժման մեջ ներկայացված կենդանիների, աշխարհիկ մարդկանց, բուսական և երկրաչափական հյուսքազարդերի քանդակներով:

ԴԱՄԲԱՐԱՆ ՊԱՊԱԲԻ ԵՎ ՌՈՒԶՈՒՔԱՆԻ (1288 թ.)

Գտնվում է համալիրի հյուսիսային կողմում, ժայռի վերին մասում: Ժայռափոր ընդարձակ կառուցվածք է՝ քառակուսի հատակագծով, չորս անջատ սյուներով կենտրոնակազմ հորինվածք: Դամբարան է առաջնորդում որմնախաչերով հարդարված, մոտ 10 մ երկարությամբ և 1.8 մ լայնությամբ ժայռափոր նեղ և երկար ինքնատիպ միջանցք:

Գեղարդավանքի վիմափոր բոլոր կառույցները լուսավորվում են երդիկներից և ստեղծված են ակուստիկայի կանոններին համապատասխան:

ԺԱՅՈՒՓՈՐ ԴԱՅԼԻԾ (XIII դ.)

Գտնվում է վանքի արևմտյան կողմում, ժայռի թեք լանջին: Ընդարձակ սրահ է (հատակագծային չափերն են՝ 9x15 մ, պահպանված բարձրությունը՝ 5 մ): Հայտնաբերվել է 1932 թ. պեղումներով և ուսումնասիրվել Թորոս Թորամանյանի կողմից: 1967 թ. սրահը փլվել է: Ենթադրվել է, որ կառույցն ունեցել է աշխարհիկ նշանակություն և ստեղծված է եղել կամ իբրև գրադարանի շենք, կամ ժողովասրահ, կամ էլ՝ սեղանատուն: Թ. Թորամանյանի հավաստմամբ, դահլիճն արժեքավոր է նրանով, որ հայ ճարտարապետության վիմափոր կառույցների մեջ աշխարհիկ բնույթի առաջին շինությունն է:

Վանքի տարածքում պահպանվել են նաև բազմաթիվ խաչքարեր, որոնց շարքում չափազանց ուշագրավ են ժայռափոր կերտվածքները:

Գեղարդավանքը հայկական վիմափոր ճարտարապետության բարձրարժեք համակառույց է, որն իր ճարտարապետական ձևերի կատարելությամբ և շինարարական վարպետությամբ առանձնահատուկ տեղ է գրավում հայ ճարտարապետության պատմության մեջ:

Գրականություն

1. Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Երևան, 1996:
2. Մանկունի Վ., Այրիվանք կամ Գեղարդայ վանք, Վաղարշապատ, 1871:
3. Հովսեփյան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մեջ, մաս 1, Վաղարշապատ, 1928: մաս 2, Երուսաղեմ, 1944:
4. Սահիլյան Ա., Գառնի-Գեղարդ, Երևան, 1978:
5. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002:
6. Токарский Н. М., Герард, Москва, 1948.
7. Sahinian A., Manoukian A., Aslanian A., Ghogh(h)ard, Milano, 1973 (Documenti di architettura armena, 6).

its claws. It is supposed that it was the Proshyans' patrimonial coat of arms. There are also other portraits engraved on the walls.

The second rock-cut church belongs to the type of a domed-hall. It is decorated with crosses and sculptures of doves, animals in the motion, saints and sculptures decorated with floral and geometric ornaments.

PAPAK & RUZUKAN GAVIT-SEPULCHER (1288)

It is located on the northern side of the complex, in the upper part of the cliff. It is a rock-cut spacious structure, with a square layout, a centralized composition with four separate columns. A narrow and long rock-cut tunnel-like entrance of about 10 m. in length and 1.8 m in width leads to the sepulcher.

All rock-cut structures of Geghardavank are lighted out of the garrets and are created according to the rules of acoustics.

THE HALL HOLLOWED OUT OF A ROCK (XIII C.)

It is located on the west side of the monastery, on the sloping slope of the cliff. It is a spacious hall (5 meters in height, 9X15 meters in dimensions). It was discovered during the excavations conducted in 1932 and was studied by Toros Toramanyan. In 1967, it was almost completely destroyed. It was supposed that the structure had a secular function and was created either as a library, meeting-hall or dining-hall. According to T. Toramanyan, the hall is valuable because in the Armenian architecture it is the first hollowed out of a rock structure that had secular nature.

Numerous khachkars are preserved in the monastery area, among which the hollowed out in a rock layers are very remarkable.

The Monastery of Geghard has a special place in the history of Armenian architecture with the perfection of its architectural forms and construction skill.

Bibliography:

1. Hovhannes Draskhanakertsi Armenian History, Yerevan., 1996.
2. Mankouni V., "Ayrivanq or The monastery of Geghard", Vagharshapat, 1871.
3. Sahinyan A., Garni-Geghard, Yerevan., 1978.
4. "Christian Armenia", Encyclopedia, Yerevan., 2002.
5. Tokarskii N., "Geghard", Moscow, 1948.
6. Sahinian A., Manoukian A., Aslanian A., Gheg(h)ard, Milano, 1973 (Documenti di architettura armena,





ԶՎԱՐԹՆՈՑԻ ՀԱՄԱԼԻՐ
THE CATHEDRAL OF ZVARTNOTS

Չվարթնոցի տաճար, Վաղարշապատի Սբ. Գրիգոր եկեղեցի, Առապարի Սբ. Գրիգոր անուններով հայտնի հուշահամալիրը գտնվում է Էջմիածին / Վաղարշապատ/ քաղաքից 3կմ հվ, Էջմիածին-Երևան խճուղու մոտ, բարձր հարթակի վրա: Ենթադրվում է, որ այն կառուցվել է «Չվարթնոց» անունով ավելի հին կառույցի տեղում, ուր ըստ ավանդության Գրիգոր Լուսավորչին երևացել են «երկնագործ» հրեշտակները: Կամսար Ավետիսյանն իր «Հայագիտական Ետյուդներում» նշում է. «Այդպես էր կոչվում, որովհետև այն նվիրված էր երկնային զվարթունքներին: Չէ՞ որ «զվարթուն» հայերեն նշանակել է նաև «հրեշտակ»: Այնպես որ Չվարթնոց նշանակում է նաև «Հրեշտականոց»: Չվարթնոցը հիշատակվել է պատմիչներ Սեբեոսի, Մովսես Կաղանկատվացու, Հովհաննես Դրասխանակերտցու, Ստեփանոս Ասողիկի և Թովմա Աթորունու, Սամուել Անեցու, Վարդան Բարձրաբերդցու, Կիրակոս Գանձակեցու, Մխիթար Այրիվանեցու կողմից: Պատմիչների վկայությամբ և ըստ պահպանված հունարեն արձանագրության Չվարթնոցը կառուցել է Ներսես Գ Տայեցի կաթողիկոսը 644-652թթ.: Նա Տայք գավառի Իշխան գյուղից էր, մանկությունից ապրել էր Բյուզանդիայում, ստացել զինվորական բարձր աստիճան, և ինչպես վկայում է Մովսես Կաղանկատվացին, այնքան մեծ համակրանք է գտել կայսերական տան մեջ, որ «հայրագիր եղավ Կոստանդ կայսեր, երբ Հայաստան վերադարձավ՝ կուսակրոն դարձավ»: Հայաստանում ևս հոգևորականության շրջանում մեծ հեղինակություն վայելելով, Եզր կաթողիկոսի մահից հետո, հայ իշխանների ձեռքով 641թ. հռչակվել է կաթողիկոս: Ինչպես վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին, երբ Ներսեսը կաթողիկոս եղավ, արաբների արշավանքի պատճառով Հայաստանը, մանավանդ Դվինը քարուքանդ էր եղել, բնակչությունը գերեվարվել, դաշտերը դիակներով էին ծածկված: Դվինի և կաթողիկոսարանի միանգամայն ավերված լինելը, թերևս Ներսեսին առիթ էն տվել իր շինարարությունը սկսել Վաղարշապատի մեջ ու կաթողիկոսարանն էլ այնտեղ փոխադրել: Ուսումնասիրողների կարծիքով Ներսեսի նպատակը հավանաբար միայն եկեղեցի ու կաթողիկոսարան կառուցելը չէր, այլ բյուզանդական ու հռոմեական քաղաքներին բնորոշ շուքով ու վայելչությամբ մի նոր քաղաք հիմնելն էր իր ծրագրած հոյակապ տաճարի և կաթողիկոսարանի շուրջ:



The cathedral, also known as the Zvartnots temple, church of St. Gregory of Vagharshapat and St. Gregory of Arapar, is situated 3 km south from the town of Echmiadzin (Vagharshapat), near the Echmiadzin-Yerevan highway, on a high plateau. It is believed that it was built on the site of an older construction named «Zvartnots», where, according to the tradition, «celestial» angels appeared to Grigor Lusavorich (St Gregory the Illuminator). Kamsar Avestisyan mentioned in his «Etudes of Armenian Studies»: «That was its name because it was dedicated to the celestial zvertuns. After all, the «zvertun» in Armenian meant «angel». Then, Zvartnots also means «place of angels». Zvartnots was mentioned by the historians Sebeos, Movses Kaghankatvatsi, Hovhannes Draskhanakertsi, Stepanos Asoghik, Tovma Artsruni, Samuel Anetsi, Vardan Bardzraberdtzi, Kirakos Gandzaketsi and Mkhitar Ayrivanetsi. According to the historians and preserved Greek inscription, Zvartnots was built by Catholicos Nerses III Tayetsi in 644-652. He was originally from the village of Ishkhan in Tayk, but all his childhood he lived in Byzantium, received a high military rank and, according to Movses Khorenatsi, gained such a great sympathy with in the Imperial Palace. Having great reputation also among the Armenian clergy, after the death of Catholicos Ezra, was proclaimed Catholicos of all Armenian by the Armenian princes in 641. According to the historian Hovhannes Draskhanakertsi, when Nerses became Catholicos, Armenia, especially Dvin, was destroyed because of the Arab invasion, population were taken prisoner, and fields - littered with corpses. The devastation of Dvin and Catholicosate gave Nerses an opportunity to start his own construction in Vagharshapat and transfer the Catholicosate there. According to researchers, the goal of Nerses was probably not to build a church and Catholicosate, but to establish a new city with the luxury and splendor typical to other Byzantine and Roman cities around the magnificent temple and Catholicosate he constructed.



THE CATHEDRAL OF ZVARTNOTS

Դրասխանակերտցին վկայում է. «Բայց հայրապետն Ներսես պարապ անձին գտեալ՝ զարտաքոյս հրաշակերտ եկեղեցոյն, զոր յուր իսկ էր շինեալ՝ շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրուցուցաներ, յօրինեալ ի նմա յարկս բնակութեան ինքնեան հաստահեղոյս կոպածոյ քարամբք: Այլ և կարդեալ կացուցաներ ի նմա ամբոխութիւնս երդումարդաց ըստ պայմանի քաղաքականաց»: Ներսես կաթողիկոսի՝ հոյների հետ կրոնական մերձեցումը հավանաբար ազգին փորձություններից հեռու պահելու նպատակով էր, որի համար նա երկար տարիներ հալածվեց Թեոդորոս Ռշտունու կողմից: 651թ. Թեոդորոս Ռշտունու հունաց կայսեր դեմ ապստամբելու հետևանքով երկիրը վտանգի մեջ էր հայտնվել, քանի որ Կոստանդ Բ կայսրը մեծ զորքով արշավել էր Հայաստան: Պատերազմական արհամիրքը կանխելու համար Ներսեսը ընդառաջ է գնացել կայսրին և, նրա բարկությունը մեղմելու ու Հայաստանը սպառնացող աղետից ազատելու համար, նույնիսկ հունածես պատարագ է մատուցել ու հաղորդություն ընդունել: Ըստ Թ. Թորամանյանի Չվարթնոցի կառուցումն սկսվել էր 644թ. և Կոստանդ Բ կայսեր Հայաստան գալու տարում՝ 652թ. եկեղեցին հիմնականում արդեն ավարտված էր, ուստի հավանական է Մովսես Կաղանկատվացու այն վկայությունը, որ Չվարթնոցը կառուցվել է կայսեր միջոցներով. «գանձիւք նորա շինեաց զբազմապայծառ փարախն բանաւոր հօտից», ապա թե կայսրը պետք է հետաքրքրված լիներ հռչակ հանած եկեղեցին տեսնելու, իսկ Ներսեսի էլ պարտքն էր հրավիրել կայսրին եկեղեցու օծմանը: Այսպիսով վստահելի է պատմիչի վկայությունը, որ 652թ. Բյուզանդիայի կայսեր Հայաստան գալու ժամանակ եկեղեցին եղել է ամբողջացած, օծվել է մասնակցությամբ և հիացրել իր գեղեցկությամբ: Չնայած Ներսեսին հաջողվել է Հայաստանը կոտորածից ազատել, բայց հակահունական ուժեղ հակառակորդներից ազատվելու համար կայսեր հետ հեռացել է Պոլիս, իսկ 653թ. վերադարձել Տայք:

Չվարթնոցը կանգուն է եղել մինչև X դարի վերջը և, հավանաբար, ավերվել է երկրաշարժից: Տաճարի հողածածկ ավերակների պեղումները սկսվել են 1901թ. Խաչիկ վարդապետ Դադյանի նախաձեռնությամբ և շարունակվել մինչև 1907թ.: 1904թ. պեղումներին մասնակցել է ճարտարապետ Թ. Թորամանյանը, որը մանրակրկիտ ուսումնասիրությունների արդյունքում կազմել է տաճարի ճշգրիտ վերակազմությունը: Պեղումներով, բացի տաճարից, հայտնաբերվել են հնագույն և IV-V դդ. կառույցների մնացորդներ, Վանի թագավոր Ռուսա Բ թագավորի սեպագիր արձանագրությամբ կոթող, տաճարից հվ-ամ գտնվող կաթողիկոսական պալատի համալիրը, հվ-ամ մասում գտնվող քարաշեն հնձան: Ըստ Թ. Թորամանյանի մասամբ անաղարտ պահպանվել է եկեղեցու հատակագիծը, որի դրսի կողմում տեղ-տեղ պահպանվել են աստիճանները, իսկ ներսի կողմում գրեթե անվնաս է: Կառույցը ներքուստ ամբողջովին բոլորակ է, իսկ արտաքուստ՝ անկյունավոր պատերով: Այդ կլորության վրա ներքուստ շարված են 24 սմ տրամագծով 64 կիսասյուներ, որոնց միջև հեռավորությունները բաժանված են երկու հավասար չափերի՝ 1,68մ և 1,18մ: Այսպիսով մեկ լայն մեկ նեղ սյունամիջոցները հաջորդաբար շարունակվում են ամբողջ բոլորակի վրա: Եկեղեցու կենտրոնից հավասար հեռավորության վրա գետեղված են չորս մեծ, լայնանիստ և հաստահեղոյս սյուները, որոնց միացած են չորս կիսաբոլորակներ, որի հետևանքով եկեղեցու ներքին մասում ստացվել է կիսաբոլորակներից կազմված խաչաձև հորինվածք, որի կենտրոնում մկրտության ավազանն է: Գեղարվեստական ճաշակի մասին են վկայում նուրբ ու գեղեցիկ քանդակները և նրանց հմուտ դասավորությունը: Չվարթնոցի եկեղեցին իրենից ներկայացնում է հռոմեական, բյուզանդական, հունական և հայկական ոճերի մի խառնուրդ: Մեծ սյուների խարիսխները բյուզանդական են, իսկ խոյակները՝ բացի հունական գալարազարդերից, բոլորովին ինքնատիպ: Կողովների հյուսկեն քանդակները զուտ հայկական են: Բոլորովին ինքնատիպ են նաև արծվաքանդակ կրող խոյակների ձևերը: Չվարթնոցը կառուցվել է յոթաստիճան բազմանիստ պատվանդանի վրա:

The religious rapprochement with the Greeks was probably intended to keep the nation away from ordeals, for which Nerses was persecuted by Theodoros Rshtuni for many years. In 651, due to the rebellion of Theodoros Rshtuni against the Greek Emperor, the country was in danger and the emperor Constantine II invaded Armenia with a large army. Nerses met the emperor half-way to prevent the war, and even conducted a Greek liturgy to assuage his anger and prevent the threatening disaster. According to T. Toramanyan, the construction of Zvartnots began in 644 and by the time the emperor Constantine II came to Armenia (in 652) the church was already constructed, therefore, the testimony of Movses Kaghankatvatsi, that Zvartnots was constructed by the time the emperor came to Armenia, is reliable, then he was supposed to be interested in seeing the famous church, and Nerses had to invite the emperor to the consecration of the church. Although Nerses managed to prevent Armenia from massacre, he left for Constantinople with the emperor to get rid of the strong anti-Greek opponents, but in 653 he returned back to Tayk.

Zvartnots remained standing until the end of the X century, but probably was destroyed by an earthquake. The excavations of the ruins covered with earth began in 1901 by the initiative of Khachik Vardapet Dadian and continued until 1907. In 1904 the architect T. Toramanyan participated in the excavations and, after thorough research, made an exact architectural plan for the restoration of the temple. The excavations furthermore revealed that, in addition to the temple, there were also remains of other ancient structures dating back to the IV-V centuries, a monument with a cuneiform inscription of the Urartian king Rusa II, the palace of the Catholicos, located in the south-western part of the church, a winery located in the south-east part. According to T. Toramanyan, the layout of the church remained partly untouched, on the outside of which the stairs are partially preserved and inside - almost undamaged. On the inside the building is completely circular and with polyhedral walls on the outside. From inside the walls are decorated by 64 semi-columns with a diameter of 24cm, the distances between which are divided into two equal sizes: 1,68m and 1,18m. Thus, wide and narrow spans between the columns are repeated sequentially throughout the round. From the central part of the church, there are four massive, wide and strongly constructed columns erected at the equal distance to which four semi-circles are attached. As a result, a cross-shaped composition of semi-circles was formed inside the church at the center of which there is a baptismal font. The artistic taste is evidenced by refined and beautiful sculptures and their right location. The Cathedral of Zvartnots is a mixture of Roman, Byzantine, Greek and Armenian styles. The anchors of the massive columns are Byzantine, and the capitals, except the Greek shell-shaped ones, are completely unique.

The sculptures are purely Armenian. The eagle-shaped sculptures are also unique. The cathedral has been built in the center of a seven-stage pedestal. According to T. Toramanyan reconstruction, it's a centrally forming, domed, inside three-dimensional, successively decreasing three tubular /dimensional/ composition, the core of which is the quadrant, with a two-story hall. The square altars are in harmony with each other with their complex cuts, and main pillars which form a dome, monolithic system with four arches and slats connecting



Ըստ Թ. Թորամանյանի վերակազմության այն կենտրոնական, գմբեթավոր, արտաքուստ եռաստիճան, հաջորդաբար նվազող երեք գլանային /բազմանիստ/ ծավալների միասնական հորինվածք է, որի կորիզը քառակոնքն է՝ ստորին աստիճանում ընդգրկված երկհարկ, պարարկյալ սրահով: Քառակոնքի խորանները միմյանց ներդաշնակվում են բարդ կտրվածքի, չորս զանգվածեղ, մայր մույթերով, որոնք վերին՝ կապող 4 կամարների ու առագաստների հետ կազմում են գմբեթակիր, միաձույլ համակարգ: Մայր մույթերի դիմաց՝ պարարկյալ սրահում տեղադրված են թևատարած արծվաքանդակ խոյակներով պսակված չորս միակտոր, խոշոր սյուներ, որոնք թաղակամարներով կապված են մայր մույթերին: Տաճարի հինգ շքամուտքերը հս, հս-ամ, ամ, հվ-ամ, հվ շառավղային առանցքով են տեղադրված: Ընդհանուր 112 պատուհանից 80-ը ներառված են որմնասյունային խորաններում, 32-ը՝ բոլորակ, քանդակազարդ պսակների մեջ: Անկասկած հվ մասում է տեղադրված եղել արևային բոլորակ ժամացույցը: Առաջին խորանաշարի վերին մասը պարագծով ընդգրկող քանդակազարդ գոտին հարդարված է խաղողի որթի, տնաքանդակների և բանալի, բահ, բրիչ և այլ գործիքներ բռնած հոգևոր ու աշխարհիկ անձանց 32 բարձրաքանդակներով, որոնցից պահպանվել են 9-ը: Եկեղեցու ճակատի առաջին հարկի սյուներն իրար կապող աղեղների մեջտեղում, ձեռքին մուրճ ու բահ բռնած վեղարավոր և մորուքավոր պատկերաքանդակի վրա հայատառ փորագրված է Յոհան: Ըստ Գ. Լևոնյանի նա հավանաբար եկեղեցու ճարտարապետն է: Տաճարն ընդգրկող զարդագոտիների ամենաարտահայտիչ մասերից է բոլորակ պատուհանների պսակազարդ պատը: Համալիրի ծավալա-տարածական ձևերը հատկապես լավ են երևում հս-ից և ամ-ից. դեպի այդ կողմերն են ուղղված լայն որմնախարսխի աստիճանները, որոնց վրա կառուցված է տաճարը: Սկզբունքորեն այլ կերպ է լուծված համալիրի քաղաքացիական շինությունների դասավորությունը: Զիչ հեռու տեղավորված է սեղանատունը, իսկ համալիրի հվ-ամ անկյունում գտնվում է միջնադարյան արտադրական համալիրի մեզ հասած լավագույն օրինակներից մեկը՝ հնձանը:

Հայկական միջնադարյան ճարտարապետական կոթողներից զվարթնոցատիպ են Ներսես Գ Տայեցու կառուցած Իշխանի և Բանակի եկեղեցիները, Աղվանքում՝ Լյակիթի եկեղեցին, Անիում՝ Գագկաշեն Սբ. Գրիգոր եկեղեցին: Հետագա դարերում հայկական ճարտարապետությունը մեծապես կրել է Չվարթնոցի ազդեցությունը: Տաճարը վաղ միջնադարյան հայկական շինարարական, դեկորատիվ արվեստների, քանդակագործության նվաճումների հանրագումար է, հայկական մշակույթի բարձր զարգացման արգասիք:

1980 - 90-ական թթ. վերականգնվել են խորանների սյունաշարերը, արծվախոյակ սյուները, առաջին աստիճանի պատերի ստորին մասերը:

Չվարթնոցի տաճարը 1989թ. ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում:

Գրականություն

1. Սեբեոս, Պատմություն, Ե., 1979:
2. Մարության Տ., Չվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ, Ե., 1963:
3. Մնացականյան Ս., Չվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Ե., 1971:
4. Թորամանյան Թ., Չվարթնոց, Գագկաշեն, Ե., 1984:
5. Օրագեան Ա., Չուարթնոց, Գահիրե, 1957:



the top. In front of the main pillars, in the hall, there are four eagle-shaped massive columns which are attached to the main pillars. The five entrances of cathedral are placed in the north, north-west, west, south-west, south-east radius axis. Of the all 112 windows, 80 are included in the altars and 32 are in the sculptured arcs.

Undoubtedly, the solar watch was located in the southern part. The upper part of the first altar is decorated with the sculptures of bunch of grapes, grenades and 32 statues of spiritual and secular persons, holding key, spade, hoe and other instruments. Only 9 of them are preserved.

In the middle of the arches connecting the columns of the church's first floor, on the bearded friar sculpture, holding hammer and spade, is engraved in Armenian "Johan". According to G. Levonyan he was probably the architect of the church. The decorated wall of circle windows is one of the most impressive parts of the church.

The appearance of the complex is especially well seen from the north and east, as there are wide stairs at that sides on which the temple is constructed.

Fundamentally different solution was given to the location of civil buildings.

A little far from a refectory is located, and on the south-east corner of cathedral there is one of the best examples of middle-aged production complex – wine press.

The medieval Armenian architectural monuments – the church of the Ishkhan and Banak, built by Nerses G. Tayetsi, Lyakit Church (Aghvank), Gagkashen St. Grigor Church (Ani) were constructed by type of Zvartnots.

In the following centuries, Armenian architecture had been mostly influenced by Zvartnots.

The temple is a complex of early medieval Armenian construction, decorative arts and sculpture achievements and the result of Armenian culture development.

The colonnades of the altars, the highly placed chapters the lower part of the walls of the first floor were reconstructed in the 1980-90-ies.

The temple was included in the UNESCO list of World Cultural Heritage in 1989.

Bibliography:

1. Sebeos, «History of Armenia»; Yerevan. 1979.
2. Marutyan, «Zvartnots ev Zvartnotsatip tatcharner»; Yerevan. 1963.
3. Mnatsakanyan S., «Zvartnots ev nuynatip hushardzanner»; Yerevan. 1971.
4. Toramanyan T., «Zvartnots, Gagkashen»; Yerevan. 1984.
5. Oragean A., «Zuartnots»; 1957.





ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՇԻՆ
THE MOTHER SEE OF HOLY ECHMIATSIN

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայ ժողովրդի, աշխարհասփյուռ հայերի ամենանվիրական սրբավայրն է, մշակութային նշանավոր կենտրոն, Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր և վարչական կենտրոնը: Գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքում:

Էջմիածնի Մայր տաճարը՝ Վաղարշապատ մայրաքաղաքի Կաթողիկե (Սբ. Աստվածածին) եկեղեցին, Հայ Առաքելական Եկեղեցու գլխավոր կրոնական շինությունն է և համարվում է պետության կողմից կառուցված ամենահին քրիստոնեական եկեղեցին աշխարհում: Այն կառուցել է Սբ. Գրիգոր Ա Լուսավորիչը (302-325), Հայոց Տրդատ Գ թագավորի (287-330) օժանդակությամբ, արքունի ապարանքի մոտ, հեթանոսական մեհյանի տեղում, քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո՝ 302-303 թթ.: Ավանդության համաձայն Գր. Լուսավորիչը տաճարի տեղն ընտրել է տեսիլքով, ըստ որի՝ Աստծո Միածին Որդին, երկնքից իջնելով, ոսկե մուրճով հարվածել է գետին՝ ցույց տալով այն վայրը, ուր պետք է հիմնարկվեր տաճարը: Այդտեղից էլ առաջացել է «Էջմիածին» այսինքն՝ «իջավ Միածինը» անվանումը: Ապա Լուսավորիչը հաստատել է Հայոց քահանայապետությունը, կառուցել է հայրապետանոց, միաբանների կացարաններ, հիմնել է դպրոց՝ եկեղեցու սպասավորներ և ուսուցիչներ պատրաստելու նպատակով:

364 թ. Պարսից Շապուհ II թագավորը մեծ զորքի զուլխ անցած ներխուժել է Հայաստան, ի թիվս այլ բնակավայրերի գրավել է նաև Վաղարշապատը, ավերել քաղաքի շինություններն ու վանքը, հիմնել կրակարան (ատրուշան): Պարսիկների հեռանալուց հետո վանքը վերականգնել են Ներսես Ա Մեծ (Պարթև, 353-373) և Սահակ Ա Պարթև (387-439) կաթողիկոսները:

Ի սկզբանե Էջմիածնի վանքը՝ Մայրավանքը, եղել է Հայոց հոգևոր-մշակութային կարևոր կենտրոն, գրչօջախ, սատարել է հայ ժողովրդի ազատագրական պայքարին և, անկախ կաթողիկոսական Նստավայրի տեղափոխություններից (Դվին, Անի, Աղթամար, Հռոմկլա, Սիս), պահպանել է առաջնային Մայր տաճարի և Հայ եկեղեցու սրբազնագույն կենտրոնի նշանակությունը: V դ.՝ Հայոց գրերի գյուտից հետո, այստեղ են հիմնվել մեսրոպատառ առաջին դպրոցը և Հայոց առաջին մատենադարանը:

484-486 թթ. Հայաստանի մարզպան Վահան Մամիկոնյանը հիմնովին վերակառուցել է տաճարը, որից հետո այն ստացել է ներկայիս հատակագծային ու ծավալատարածական տեսքը (խաչաձև, կենտրոնագմբեթ, քառամույթ, քառախորան): Էջմիածնի տաճարի այս հորինվածքը IX-XI դդ. Բյուզանդիայի միջոցով տարածվել է Եվրոպայում (Հունաստան, Իտալիա, Ֆրանսիա):

VII դ. վանքում շինարարական ծավալուն աշխատանքներ են ծավալել Կոմիտաս Ա Աղցեցի (615-628), Եզր Ա Փառաժնակերտցի (630-641) և Ներսես Գ Տայեցի (Շինարար, 641-661) կաթողիկոսները: Մասնավորապես, կառույցների փայտաշեն մասերը վերակառուցվել են քարով:

Վանքը բազմիցս ենթարկվել է օտար նվաճողների հարձակումներին, ավերվել ու թալանվել, ապա վերաշինվել է և շարունակել իր հայանպաստ ու հայապահպան գործունեությունը, սատարել օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին:

1441 թ. Կիլիկիայի Սիս քաղաքից Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը փոխադրվել է Էջմիածին: Վանքը վերականգնել է իր ժողովրդականությունը և կրկին դարձել հայության գլխավոր հոգևոր կենտրոնը:

XVI-XVII դդ. ընթացքում վանքը մեծապես վնասվել է թուրք-պարսկական պատերազմների հետևանքով: Ինչպես այդ ժամանակաշրջանում, այնպես էլ հետագայում տեղում շինարարական աշխատանքներ են կատարել գրեթե բոլոր Հայոց հայրապետները: Պարսից Շահ Աբաս Ա-ի հրամանով վանքի որոշ մասեր քանդվել և տարվել են Նոր Զուղա

The Mother See of Holy Echmiatsin is the most sacred sanctuary of the Armenian nation and world-spread Armenians, a prominent cultural center and the spiritual and administrative center of the Armenian Apostolic Church. It is located in the city of Vagharshapat (Echmiadzin) in the region of Armavir of RA.

The Mother See of Holy Echmiatsin (the Katoghike (St. Astvatstsin)) church of the capital Vagharshapat) is the mother church of the Armenian Apostolic Church and considered as the oldest state-built church in the world. It was built by St. Gregory the Illuminator (302-325), with the support of the pagan King of Armenia Tiridates III (287-330), near the royal palace, on the place of the pagan temple, following the adoption of Christianity as a state religion (302-303). According to sacred tradition, St. Gregory the Illuminator chose the place of the Cathedral by a vision, according to which the Son of God descended from heaven and struck the ground with a golden hammer, pointing the place where the Cathedral must be established. The name «Echmiatsin», which means «the descent/the coming of the Only Begotten Son», refers to this episode. Then, St. Gregory the Illuminator organized the Armenian Church hierarchy, built a patriarchal residence, dwellings for monks and founded a school to prepare church servants and teachers.

In 364, the Persian king Shapur II invaded Armenia, in addition to the other settlements, also occupied Vagharshapat, destroyed the monastery and buildings of the city and constructed a heathen temple. After the he Persians left, the monastery was restored by the catholicoses Nerses I the Great (Parthev, 353-373) and Sahak I Parthev (387-439).

The monastery of Echmiatsin (the Mayravanq) originally was an important spiritual and cultural center, grchojakh (correspondence center), supported the liberation struggle of the Armenian people and, regardless of relocation of the Catholicosate (Dvin, Ani, Akhtamar, Hromkla, Sis), preserved the significance of the main Mother Cathedral and sacred center of the Armenian Church. After the invention of the Armenian alphabet (the V c.) the first “mesropatar” school and the first Matenadaran were founded here.

In 484-486, the marzipan (governor) of Armenia Vahan Mamikonian rebuilt the cathedral, after which it has the current layout and dimensions (cross-shaped, centered-dome, four-pillared and with four apsis). This composition of Echmiatsin cathedral, through Byzantium, was spread throughout Europe during the IX-XI cc. (Greece, Italy and France).

In the VII c., the catholicoses Komitas I Aghtsetsi (615-628), Ezr I Parajnakertsi (630-641) and Nerses III Tayetsi (known as The Builder) (641-661) carried out extensive construction works in the monastery. Particularly, the wooden parts of the buildings were rebuilt in stone.

The monastery had repeatedly been attacked by foreign conquerors, destroyed and robbed, but then, it was restored and continued its activities aimed at preservation of the Armenian identity and support the liberation struggle of the Armenian people against foreign conquerors.

In 1441 the seat of the Catholicos of All Armenians was transferred from Sis to the Holy Echmiatsin. The monastery regained its former popularity and once again became the main spiritual center of all Armenians.

The monastery was greatly damaged by the Ottoman-Persian Wars (the XVI-XVII cc.). In that period, as well as later, almost all the Armenian patriarchs carried out construction works on-site. By the order of Persian Shah Abbas I, some fragments of the monastery were demolished and transferred to the New Jugha (Persia) in order to connect the Armenians, forcibly resettled in 1605, with the new settlement. Two decades later, the Catholicos Movses

(Պարսկաստան)՝ 1605 թ. բռնագաղթեցված հայերին նոր բնակավայրի հետ կապելու նպատակով: Երկու տասնամյակ անց Մովսես Գ Սյունեցի (Տաթևացի, 1629-1632) կաթողիկոսը վերանորոգել է վանքը, կառուցել է Տրդատադուռը, բրգավոր պարիսպները, տաճարի՝ 12 առաքյալների դիմապատկերներով նոր գմբեթը, հյուրանոցը, խցերն ու սեղանատունը: 1653-1658 թթ. տաճարի արևմտյան ճակատին կցակառուցվել է եռահարկ, սյունազարդ զանգակատուն (ճարտ.՝ Սահակ Զիզանցի, հովանավոր՝ կոստանդնուպոլսեցի մեծահարուստ Անտոն Զելեպի), որը որմնանկարվել է 1664 թ. (նկարիչ՝ Չաքարիա ոսկերիչ): 1682 թ., Եղիազար Ա Այնթապցի կաթողիկոսի պատվերով, տաճարի կենտրոնում՝ գլխավոր գմբեթի տակ, կառուցվել է «Իջման սեղանը»: 1738-1741 թթ.՝ Ղազար Ա Ջահկեցի կաթողիկոսի օրոք, կառուցվել են Զին Վեհարանը և «Ղազարապատ» հյուրանոցը: 1771 թ. Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսը վանքում հիմնել է Արևելյան Հայաստանում առաջին տպարանը: XVIII-XIX դդ. տաճարը ներսից պատվել է որմնանկարներով, որոնց հեղինակներն են մեծահամբավ նկարիչ, գրիչ, բանաստեղծ և աշուղ Նաղաշ Հովնաթանը (1712-1721 թթ.) և նրա տոհմի ներկայացուցիչները՝ Հարություն և Հակոբ Հովնաթանյանները (1739 թ.), Հովնաթան Հովնաթանյանը (1786 թ.), Մկրտում և Հակոբ Հովնաթանյանները (XIX դ.): Մայր տաճարի դեկորատիվ հարդարանքը՝ շքեղ ու գունագեղ բուսական զարդանախշերը, երևույթների աշխարհիկ ընկալումը հայկական որմնանկարչության մեջ նոր դրսևորում է, որը ներմուծել է Նաղաշ Հովնաթանը:



1804-1813 թթ. ռուս-պարսկական առաջին պատերազմի ժամանակ ռուս զինվորները Մայր տաճարն օգտագործել են որպես ամրություն, ինչի պատճառով այն լուրջ վնասվածքներ է կրել: 1813 թ.՝ պատերազմի ավարտից հետո, Եփրեմ Ա Ձորագեղցի կաթողիկոսը վերանորոգել է տաճարը, մասնավորապես նրա տանիքը, և կառուցել դպրատուն: Վանքը բարեկարգվել է նաև 1837 թ., ռուսաց Նիկոլայ I ցարի Հայաստան այցելելու նախօրյակին:

1836 թ. մարտի 11-ին հրապարակվել է հայոց եկեղեցու կանոնադրությունը՝ «Պոլոժենիե»-ն: 1837 թ. փետրվարի 22-ին ստեղծվել է Էջմիածնի Սինոդը՝ եկեղեցական

III Syunetsi (Tatevatsi, 1629-1632) reconstructed the monastery, built the Trdatadour, fortified walls, new dome with portraits of the 12 apostles, vanatoun (guest house), cells and dining hall. In 1653-1658, a new three-story, pillared bell tower was built near the western facade of the Cathedral (the arch. Sahak Hizantsi, sponsored by a philanthropist from Constantinople Anton Chelepy), which was frescoed in 1664 (artist: the jeweler Zachariah). In 1682, on the request of the Catholicos Eghiazar I Ayntaptsi, the «The Altar of Descent» was built on the center of the temple, under the main dome. In 1738-1741, under the Catholicos Ghazar I Jahketsi, there were built the Old Veharan (the old residence of the Catholicos) and the hotel «Ghazarapat». In 1771, the Catholicos Simeon I Yerevantsi founded the first printing house in Eastern Armenia in the temple. In the XVIII-XIX cc., on the inside, the Cathedral was decorated with frescoes, the authors of which are the honored painter, writer, poet and ashugh (bard) Naghash Hovnatan (1712-1721) and the representative of his dynasty: Harutyun and Hakob Hovnatanyans (1739), Hovnatan Hovnatanyan (1786), Mkrtum and Hakob Hovnatanyans (XIX). The interior decoration of the Cathedral - luxurious and colorful floral ornaments, the secular perception of phenomena is a new expression in the Armenian frescoes, which was introduced by Naghash Hovnatan.



In 1804-1813, during the first Russo-Persian War the Russian soldiers used the Cathedral as a fortification, which caused serious damage to the Cathedral. In 1813, after the end of the war, the Catholicos Ephrem I Dzorageghtsi renovated the temple, particularly the roof, and built a theological seminary. The monastery was also renovated in 1837 on the eve of the visit of Tsar Nicholas I of Russia.

On March 11, 1836, the charter of the Armenian Church («Polozhenie») was published. On February 22, 1837, the Echmiadzin Synod was created, which actually limited the power of the Catholicos of All Armenians. Though the Catholicos was the president of the Synod, it was almost semi-independent institution and was under the supervision of an official (a pros-

բարձրագույն խորհուրդը, որով փաստորեն սահմանափակվել է Ամենայն Յայոց կաթողիկոսի իշխանությունը: Թեև Սինոդի նախագահը կաթողիկոսն էր, բայց այն գրեթե կիսաանկախ հիմնարկություն էր և գտնվում էր ցարական կառավարության կողմից նշանակված պաշտոնյայի (պրոկուրոր) հսկողության տակ: Սինոդը լուծարվել է 1924 թ. հունվարի 1-ին՝ իր տեղը զիջելով Նորաստեղծ Գերագույն հոգևոր խորհրդին:

1869 թ.-ին Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ և Ռուսաստանի հայ համայնքների միջոցներով Մայր տաճարի արևելյան ճակատին կցվել է եռադասիվ զանձարան-թանգարան՝ եկեղեցական սպասքը և այլ իրեր պահելու համար: Վանքի թանգարանում են պահպանվում հայ մշակույթի, եկեղեցական արվեստի բազմաթիվ գործեր, ձեռագրեր, ասեղնագործ իրեր, դրամներ, գորգեր, նկարներ և այլ արժեքավոր նմուշներ:

1869-1919 թթ. Մայր Աթոռի տպարանում հրատարակվել է Յայաստանյան առաջին ամսագիրը՝ «Արարատ»-ը (հետագայում՝ «Էջմիածին»): 1874 թ. վանքին կից բացվել է հոգևոր բարձրագույն դպրոց՝ Գևորգյան ճեմարանը, որն այսօր էլ գործում է: Ունեցել է աստղադիտարան (կառ.՝ 1914 թ., քանդված է): 1889 թ. վերանորոգվել է Տրդատադուռը, վանքի բակում ստեղծվել են ծառուղիներ: 1894 թ. կառուցվել է վանականների բնակելի շենքը՝ «Երեմյան խցերը», 1903 թ.՝ մատենադարանի շենքը, 1910 թ.՝ Վեհարանի Նոր շենքը: 1914 թ. վանքը մասնակիորեն վերանորոգվել է մեծահարուստ Ալեքսանդր Մանթաշյանի բարերարությամբ:



1915-1916 թթ. Սբ. Էջմիածինը դարձել է Մեծ եղեռնից մազապուրծ եղած հայ գաղթականների ապաստան:

1921 թ. Մայր տաճարի հարավային խորանի գմբեթարդը և տանիքի վրա կառուցված փողբիկ սյունազարդ գմբեթը փլվել են ու վերականգնվել 1923 թ.՝ Ալեքսանդր Թամանյանի և Թորոս Թորամանյանի գիտական ղեկավարությամբ: Քանդվել են նաև թանգարանի տանիքի վրա իտալական կլասիցիզմի ոճով կառուցված զույգ գմբեթները՝ տաճարի ընդհանուր

ecutor) appointed by the tsarist government. The Synod was dissolved on January 1, 1924, giving way to the newly established the Supreme Spiritual Council.

In 1869, on the initiative of the Catholicos Gevorg IV Costandupolestsi and by the means of the Armenian communities in Russia, there was built a treasury-museum adjacent to the eastern front of the Mother Cathedral for keeping kitchen utensils and other items of the church. Numerous works of Armenian culture and church art, manuscripts, embroideries, money, carpets, paintings and other valuable items are kept in the museum of the monastery.

In 1869-1919, the first Armenian magazine «Ararat» (later «Etchmiadzin») was published in the printing house of the Holy See of Echmiatsin. In 1874, the Gevorkian Seminary, which still operates, was founded adjacent to the monastery. It had an observatory (was built in 1914, now destroyed). In 1889, the Trdatadur was reconstructed and, in the courtyard of the monastery, there were alleys installed. The monastic residence building, known as «Yeremian cells», was constructed in 1894, the Matenadaran - in 1903, and the new residence of the Patriarch – in 1910. In 1914, the monastery was partly renovated by a philanthropist Alexander Mantashian.



In 1915-1916, the Holy Echmiatsin became a sanctuary for Armenian refugees who survived the Armenian genocide.

In 1921, the dome of the southern altar and the small pillared dome built on the roof of the Mother Cathedral were demolished, but were reconstructed in 1923 under the scientific supervision of Alexander Tamanyan and Toros Toramanyan. The pair of domes, constructed in the style of Italian classicism, were also demolished due to the incompatibility with the general image of the temple and the Armenian national architectural style.

կերպարին և հայ ազգային ճարտարապետական ոճին անհարիր լինելու պատճառով:

1921-1941 թթ. Մայր Աթոռի պատմության ամենամռայլ ժամանակներն են: Խորհրդային իշխանություններն ազգայնացրել են Հայ եկեղեցու սեփականությունը, փակել են եկեղեցական կառույցներն ու հալածել հոգևորականներին: Միայն 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի տարիներին ֆաշիզմի դեմ Հայ եկեղեցու վարած քաղաքականության շնորհիվ մեղմվել է իշխանությունների վերաբերմունքը. վերադարձվել է եկեղեցու ունեցվածքը, բացվել է Գևորգյան ճեմարանը:

1940-1950-ական թթ. Էջմիածնի վանքի բոլոր կառույցները գտնվում էին խարխված վիճակում: Դեռևս 1945 թ. կաթողիկոս Գևորգ 2 Չորեքյանի առաջարկով ազգային-եկեղեցական ժողովը որոշում էր ընդունել Մայր տաճարի հիմնովին նորոգման մասին: Կաթողիկոսը նաև համայն հայությանը կոչ է արել օժանդակել Մայր տաճարի վերանորոգմանը: Այդ նպատակով 1950-ական թթ. վանքի տարածքում կատարվեցին պեղումներ: Պարզվեց, որ Մայր տաճարի տեղում սրբավայր է եղել դեռևս մ.թ.ա. առաջին հազարամյակում՝ Վանի թագավորության շրջանում, ինչի ապացույցն է Ավագ խորանի տակ հայտնաբերված ուրարտական բազալտե կոթողը: Հայտնաբերվեցին նաև IV-V դդ. կառուցողական շերտերը (ատրուշան և այլն):

Վերանորոգման լայնածավալ աշխատանքներ իրականացվեցին 1954-1955 թթ., Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի հատկացրած դրամական միջոցներով: Աշխատանքները վերահսկելու համար ստեղծվեց կառավարական հատուկ հանձնաժողով՝ Մարտիրոս Սարյանի գլխավորությամբ: Տաճարի հիմնանորոգման և տարածքի բարեկարգման հետ մեկտեղ, Լիդիա Դուռնովոյի ղեկավարությամբ վերականգնվեցին նաև տաճարի որմնակարները: Վերականգնումների հաջորդ փուլը կապված է Վազգեն Ա Պալճյան կաթողիկոսի գահակալության հետ: Այս աշխատանքները հովանավորել է Գալուստ Կյուլպենկյան հաստատությունը: 1982 թ. Ալեք Մանուկյանի մեկենասությամբ կառուցվել է թանգարանի նոր շենք:

Մայր տաճարի թանգարանում են պահվում նաև Հայ առաքելական եկեղեցու կարևորագույն սրբություններ՝ մասունքներ Նոյան տապանից և Զրիստոսի Խաչափայտից, Հայաստանի առաջին լուսավորիչներ Սբ. Թադեոս և Սբ. Բարդուղիմեոս առաքյալների, Հովհաննես Մկրտչի և Գր. Լուսավորչի աջերը, Սբ. Գևորգի և Պետրոս առաքյալի մասունքները, Գետարգելա Սբ. Նշանը, Սբ. Գեղարդը, որով հռոմեացի զինվորը խոցել է խաչված Զրիստոսին և այլ սրբություններ: Վանքի տարածքում կանգնեցված են հանրապետության տարբեր վայրերից, Արցախից ու Նախիջևանից բերված և IX-XVII դդ. թվագրվող մի քանի տասնյակ խաչքարեր ու կոթողներ, XX դ. ստեղծված մոնումենտալ արվեստի հուշարձաններ (Խրիմյան Հայրիկի հուշաղբյուր, «Կաթնաղբյուր», 1915 թ. Մեծ եղեռնի զոհերին նվիրված հուշարձան և այլն): XVIII դ. սկսած Մայր տաճարի տարածքում են ամփոփվում Ամենայն Հայոց կաթողիկոսների աճյունները:

Էջմիածնի մայր տաճարը խաչածառ, քառախորան, կենտրոնագմբեթ հորինվածքով կառույց է՝ զանգակատունն արևմուտքից: Գմբեթները հինգն են: Յուրաքանչյուր խորանի վրա կառուցված է մեկական փոքր սյունազարդ գմբեթ: Գլխավոր՝ մեծ գմբեթը, բարձրանում է աղոթասրահի կենտրոնում՝ 4 հզոր մույթերի վրա և ունի 12-նիստանի թմբուկ: Վերջինիս նիստերի վրա պատկերված են 12 առաքյալների դիմաքանդակները:

Տաճարն ունի երեք մուտք: Հիմնականն արևմտյանն է՝ զանգակատան մուտքը: Մյուս երկու մուտքերը բացվում են տաճարի հյուսիսային և հարավային ճակատներից: Չորրորդ մուտք է եղել տաճարի արևելյան մասից, որը հետագայում փակվել է: Ավանդության համաձայն Տրդատ Գ արքան և թագավորական ընտանիքի անդամները տաճար են մտել այս մուտքով:

Տաճարի ներսի հարդարանքի մասն են կազմում կաթողիկոսական երկու գահերը:

The 1921-1941, is the darkest period in the history of the Mother See. The Soviet authorities nationalized the properties of the Armenian Church, closed churches and persecuted the clergy. Only in 1941-1945, due to the policy, pursued by the Armenian Church against fascism during the Great Patriotic War softened the attitude of the authorities: the property of the church was returned and the Gevorkian Seminary was reopened.

In 1940-1950, all the structures of the Echmiatsin monastery were in ruins. Still in 1945, at the suggestion of the Catholicos Gevorg VI Chorekchyan, the National Ecclesiastical Assembly decided to completely renovate the Mother Cathedral. The Catholicos also urged all Armenians to support the reconstruction of the Mother Cathedral. For this purpose, in the 1950s, the excavations were carried out in the area of the monastery. It turned out that, still in the first millennium BC, there was a sanctuary on the site of the Cathedral, under the Kingdom of Van, which is evidenced by the Urartian basalt monument found under the Avag (main) altar. There were also constructive layers of the IV-V cc. (a heathen temple and etc.).

The large-scale renovations were carried out in 1954-1955 with the financial support of the Council of Ministers of the Armenian SSR. A special government commission headed by Martiros Saryan was created to monitor the work. Along with the reconstruction of the temple, and improvement of the area, under the direction of Lidia Durnovo, the frescoes of the temple were also reconstructed. The next phase of the rehabilitation is connected with the enthronement of Catholicos Vazgen I Palchyan. These works were sponsored by the Institution of Galoust Kyulpenkyan. In 1982, a new building of museum was built under the patronage of Alex Manoukyan.

The museum of the Mother Cathedral also keeps the most important sanctuaries of the Armenian Apostolic Church: relics from Noah's Ark and of the cross of Jesus, relics of the right hands of first Armenian *lusavoriches* (enlighteners): the apostles St. Thaddeus, St. Bardoughimeos, St. Hovhannes Mkrtych and St. Gregory the Illuminator; the relics of the St. Gevorg and Apostle Petros; the Getargel St. Nshan; the Holy Lance (St. Geghard), by which the Roman soldier hurt the crucified Christ and other shrines. In the territory of the monastery there are various khachkars and monuments of the IX-XVII centuries brought from different places of the republic, Artsakh and Nakhichevan, «monumental» art monuments created in the XX c. (the memorial spring for Khrimyan Hayrik, «Katnaghbyur», the monument dedicated to the victims of the 1915 Armenian Genocide and etc.). Since the XVIII c., the remains of the Catholicos of All Armenians are buried at the territory of the Cathedral.

The Mother See of Holy Echmiatsin is a cross-shaped structure, with a centered dome, four apsis and bell-tower over the western doorway. It has five domes. Each apse has a small pillared dome. The main big dome rises in the central part of the praying hall on 4 strong pillars and has 12-facet drum. The bas-reliefs of the twelve apostles are depicted on the facets.

The cathedral has three entrances. The main entrance is in west direction (it is the bell tower entrance). The other two entrances open from the northern and southern facades of the temple. The fourth entrance was from the eastern part of the temple, but was later closed. According to tradition, King Trdat III and the royal family members entered the temple through that entrance.

There are two catholicos thrones in the cathedral. The first throne made and gifted by the Armenian community of Smyrna is in front of the stage and is covered with a wide dome decorated with pearls and gold. The second throne is placed near the north-western column is a gift from Pope Innocent XIII to the Catholicos Nahapet I Edesatsi (1691-1705). The interior of the temple is completed with frescoes devoted to the Lord, apostles and historical



Չմյուռնահայերի կողմից պատրաստված առաջին գահը գտնվում է բեմի դիմաց՝ ատյանում, և ծածկված է լայն գմբեթով՝ պատված մարգարիտներով ու ոսկով: Երկրորդ գահը Հռոմի Ինոկենտիոս XIII պապի նվերն է Նահապետ Ա Եղեռացի կաթողիկոսին (1691-1705): Տաճարի ներքին հարդարանքն ամբողջանում է սրբապատկերներով, որոնք նվիրված են Տիրոջը, առաքյալներին և եկեղեցու ու ժողովրդի կյանքում կարևոր դեր խաղացած պատմական դեմքերին: Մայր տաճարի ճակատները հարդարված են քանդակներով:

Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի համալիրում, բացի Մայր տաճարից, կան նաև վանքապատկան այլ շինություններ, որոնց մեծ մասը կառուցվել է XVII դ. սկսած:

Մայր տաճարի հյուսիսային կողմում է գտնվում Նորակառույց մատուռ-մկրտարանը, որն ունի եռագմբեթ կառուցվածք, զարդաքանդակներ և այլն: Տաճարից արևմուտք՝ վանքի տարածքում է գտնվում Վեհարանի Նոր շենքը, որտեղ գետեղված են կաթողիկոսարանի դիվանատունը, կաթողիկոսի նստավայրը, ընդունելության սրահները և թանգարանը: Տաճարից արևելք գտնվում է Բաց Խորանի և Գրիգոր Լուսավորչի դարպասի համալիրը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին: Վանքի հարավ-արևելյան կողմում է գտնվում Նորակառույց «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի և հայագիտական-աստվածաբանական կենտրոնի շենքը, որտեղ մեկտեղված են Մայր Աթոռի երեք գրադարանները և ձեռագրատան ցուցադրանյութը (կառուցվել է 2000-ական թթ. սկզբին քանդված աստղադիտարանի տեղում):

Մայր տաճարի շրջապատում են գտնվում նաև դիվանատունը, հին վեհարանի շենքը, միաբանության հին և Նոր շենքերը, ուսանողական հանրակացարանը, վանատունը, տպարանը, Ալեք և Մարի Մանուկյանների Գանձատուն-թանգարանը և այլ կառույցներ: Ներկայումս վանքի հիմնական հուշարձանախմբի հարևանությամբ ընթանում են շինարարական աշխատանքներ:

Մայր Աթոռն ունեցել է վանքապատկան լիճ, որի շինարարությունն իրականացվել է XIX դ. կեսերին՝ Ներսես Ե Աշտարակեցի (Շահազիզյան) կաթողիկոսի (1843-1857) օրոք, և այսօր էլ կրում է «Ներսիսյան» անունը: Լիճը ծառայել է վանքապատկան արհեստական անտառի (չի պահպանվել) ոռոգմանը և եղել է միաբանների հանգստավայր: Ներկայումս լիճը գտնվում է վանական համալիրի սահմաններից դուրս, վերանորոգվել է 1960-ական թթ.:



figures that played an important role in the life of the church and people. The facades of the cathedral are decorated with sculptures.

Besides the Mother Cathedral, in the Mother See of Holy Etchmiatsin, there are other monastic buildings, most of which were built since the XVII c.

On the northern side of the cathedral, there is a newly built chapel-baptistry with a triangular structure, ornaments and etc. The new building of the pontifical residence is situated in the territory of the temple (in the western side). It includes the chancellery of the Catholicosate, the residence of Catholicos, reception halls and museum. The Open-air Altar and the Gate of St. Grigor Lusavorich, dedicated to the 1700th anniversary of the proclamation of Christianity, are located in the eastern side of the cathedral. On the south-eastern side of the monastery, there is the newly built «Vache and Tamar Manukyan» matenadaran and the armenological-theological center, which includes both the three matenadarans of the Mother See and the exhibition of the scriptorium (was built at the beginning of the 2000s, at the site of the ruined observatory).

The Cathedral is also surrounded by the chancellery (or divanatoon), the older residence of the patriarch, the old and new monks' cells, the vanatoon (guest house), the seminary, printing house, the Alex and Marie Manoogian Treasury-museum and other structures. Currently, construction works are carried out near the main group of monuments.

The Mother See had a monastery lake, the construction of which was carried out in the middle of the XIX c., in the time of the Catholicos Nerses V Ashtaraketsi (Shahazizyan) (1843-1857), and today it is known as «Nersisyan». The lake was used for irrigation of the artificial forest (it is not preserved) of the monastery and was a resting place for the monks. Now, the lake is located outside the monastery complex and was renovated in the 1960s.

The elections and consecration of Catholicosses of All Armenians are held at Echmiatsin Monastery. The Holy Chrism blessing ceremony (Myuron Orhnerg) is conducted every seven years.

After the proclamation of Christianity as a state religion in Armenia, at the beginning of the IV c., St. Grigor Lusavorich established a school in Vagharshapat in order to prepare servants

Էջմիածնի վանքում են տեղի ունենում Ամենայն Հայոց կաթողիկոսների ընտրությունն ու օծումը: Յուրաքանչյուր յոթ տարին մեկ կատարվում է Սբ. Մյուռնոն եփելու արարողություն:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո՝ IV դ. սկզբին, Գրիգոր Լուսավորիչը Վաղարշապատ քաղաքում հիմնել է դպրոց՝ հայ եկեղեցու սպասավորներ պատրաստելու նպատակով: V դ. սկզբին՝ Հայոց այբուբենի ստեղծումից հետո, Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի ջանքերով պատրաստվել են Հայոց գրի ուսուցիչներ ու թարգմանիչներ: Վաղարշապատի դպրոցը դարձել է հայալեզու առաջին դպրոցը, մայր վարժարան և ժամանակի բարձրագույն կրթարան, որտեղ հիմք է դրվել նաև Հայ գրչության արվեստին: Վաղարշապատի դպրոցի խնդիրն էր կազմակերպել ու ծավալել կրթական գործը Մեծ Հայքում, պատրաստել ուսուցիչներ, քարոզիչներ և հայ եկեղեցու գործիչներ: Ուսուցանել են Սուրբ Գիրքը՝ Աստվածաշունչը, վարքաբանություն, քերականություն, ճարտասանություն, երաժշտություն, տրամաբանություն, գրչության արվեստ: Հետագայում, հունական բարձրագույն դպրոցների օրինակով, այդ առարկաներին ավելացել են նաև աստղաբաշխություն, թվաբանություն, բարոյագիտություն: Սկզբում դասավանդել են Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը, ապա՝ Եզնիկ Կողբացին ու Աղան Արծրունին: Դպրոցի շրջանավարտներից էին Հայոց պատմության ու մշակույթի այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք էին իմաստասեր Եզնիկ Կողբացին (V դ.), պատմահայր Մովսես Խորենացին (V դ.), Հայոց գործերի սպարապետ, 451 թ. Ավարայրի ճակատամարտի հերոս Վարդան Մամիկոնյանը, Նիգ-Ապարան գավառի տեր և նույն ճակատամարտի մասնակից Տաճատ Գևորգուն և այլք: Դպրոցն ունեցել է մատենադարան:

V դ. վերջերից սկսած, քաղաքական հանգամանքների բերումով կաթողիկոսական աթոռը Դվին և ապա՝ այլ վայրեր փոխադրելու հետ մեկտեղ, տեղափոխվել է նաև կաթողիկոսարանի դպրոցը: Միայն 1441 թ., երբ Վաղարշապատում վերստին հաստատվեց Ամենայն Հայոց կաթողիկոսարանը, վերաբացվեց նաև Վաղարշապատի (Էջմիածնի) դպրոցը: Կազմակերպիչն ու առաջին ուսուցչապետն էր ժամանակի նշանավոր կրոնական ու քաղաքական գործիչ, պատմիչ Թովմա Մեծփեցին: Անբարենպաստ պայմանների պատճառով դպրոցը երկու տարի անց փակվել է: Հետագայում՝ 1640 թ., Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ բացվել է նոր դպրոց՝ Վարդապետարան, որը որոշ ընդմիջումներով գործել է մոտ երկու և կես դար, հետագայում հայտնի է դարձել «Էջմիածնի Ժառանգավորաց դպրոց» անունով: Այստեղ դասավանդել են XVII դ. հայտնի մտավորականներ ու կրոնական գործիչներ Ոսկան Երևանցին, Սիմեոն Զուղայեցին, Ստեփանոս Լեհացին, պատմիչ Առաքել Դավրիժեցին և այլք: Ուսումնական ծրագրի մեջ մտել են կրոնագիտություն, հայոց լեզու, փիլիսոփայություն, դասական գրականություն, տրամաբանություն, քերականություն: Էջմիածնի դպրոցի դերը մեծացել է հատկապես XVIII դ.՝ Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի օրոք:

XIX դ. Ներսես Ե Աշտարակեցին կառուցել է դպրոցի նոր շենք (50 աշակերտի համար): Դպրոցի շրջանավարտներից էր հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանը: Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կայսրության կազմի մեջ մտնելուց հետո՝ 1836 թ. սկսած, ուսանել են նաև ռուսաց լեզու, 1860-ական թթ.՝ լատիներեն, ֆրանսերեն ու հայոց պատմություն:

1874 թ., Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի օրոք, այս դպրոցի հիմքի վրա ստեղծվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, որը հսկայական դերակատարում է ունեցել հայ ժողովրդի կրթության և մշակույթի զարգացման գործում: Հիմնադրվել 1869 թ. մայիսի 25-ին, բացումը տեղի է ունեցել 1874 թ. սեպտեմբերի 28-ին:

2000 թ. Էջմիածնի Մայր տաճարը, Սբ. Գայանե, Սբ. Հռիփսիմե, Սբ. Շողակաթ եկեղեցիների և Չվարթնոցի տաճարի հետ միասին, ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցուցակում:

of the Armenian Church. At the beginning of the V c., after the creation of the Armenian alphabet, through the efforts of Mesrop Mashtots and Sahak Parthev, scholars and translators of the Armenian script were trained. The school of Vagharshapat became the first Armenian school (the main and the higher educational institution of that time), where the basis of the Armenian art of writing was laid. The goal of the school of Vagharshapat was to organize and implement the educational work in Greater Armenia (Mets Hayk), prepare scholars, preachers, and religious figures. They taught the Bible, theology, grammar, rhetoric, music, logic, and art of writing. Later, according to the example of the Greek high schools, these subjects were also added astronomy, arithmetic, and ethics. At the beginning, they were taught by Mesrop Mashtots and Sahak Parthev, then – Yeznik Koghbatsi and Aghan Artsruni. Among the graduates of the school were prominent figures of Armenian history and culture, such as the imastaser Yeznik Koghbatsi (V c.), the historian Movses Khorenatsi (V century), The commander of the Armenian forces and hero of the Battle of Avarayr (451) Vardan Mamikonian, The head of the Nig-Aparan province and the participant of the same battle Tachat Gntuni and others. The school had a matenadaran.


From the end of the V c., due to political circumstances, the school of Catholicosate, along with the seat of Catholicosate, was transferred to Dvin, then to other places. Only in 1441, when the Catholicosate of All Armenians was re-established in Vagharshapat, the school of Vagharshapat (Echmiatsin) was also reopened. The organizer and the first scholar was a prominent religious and political figure, historian Tovma Metsophetsi. The school was closed two years later due to adverse conditions. Later, in 1640, on the initiative of the Catholicos Philipos I Agbaketsi a new school (the Vardapetaran) was opened, which operated for some two and a half centuries, later it became known as «Jarangavorats School of Echmiadzin». The prominent intellectuals and religious figures of the XVII c. - Voskhan Yerevantsi, Simeon Jughayetsi, Stepanos Lehatsi, historian Arakel Davrizhetsi and others, taught here. The curriculum included religious studies, Armenian language, philosophy, classical literature, logic, grammar. The role of school of Echmiatsin grew especially in the XVIII c., under the Catholicos Simeon I Yerevantsi.

In the XIX c., Nerses V Ashtaraketsi founded a new school (for 50 students). The founder of the Armenian literature Khachatur Abovyan was one of the graduates of the school. After the accession of Eastern Armenia to the Russian Empire, since 1836, they also taught the Russian language, and in 1860s - Latin, French languages and the history of Armenian.

In 1874, under the Catholicos Gevorg IV Costandupolestsi, the Gevorgyan Seminary of Echmiatsin was established on the basis of this school, which played a huge role in the development of education and culture of the Armenian nation. It was established on May 25, 1869, and the opening ceremony took place on September 28, 1874.

In 2000, The Mother See of Holy Echmiatsin, the churches of St. Gayane, St. Hripsime and St. Shoghakat, along with the Zvartnots temple, were included in the UNESCO World Heritage List.





ՍԲ. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑԻ
THE CHURCH OF ST. GAYANE

Հայ առաքելական եկեղեցու գլխավոր սրբավայրերից Է: Գտնվում է Վաղարշապատ քաղաքի հվ. մասում: Կառուցումը կապված է Հռիփսիմյան կույսերի ավանդության հետ: Մատենագրական աղբյուրների համաձայն՝ 630 թ. կառուցել է Եզր կաթողիկոսը հռոմեական կայսր Դիոկղետիանոսի հալածանքներից Հայաստան փախած և նահատակված քրիստոնյա կույսերից Գայանեի գերեզմանի վրա, IV դ. հիմնված մատուռի տեղում:

Եկեղեցին ներդաշնակ համաչափություններով, տպավորիչ ինտերիերով քառամույթ գմբեթավոր բազիլիկ է: Գմբեթակիր չորս մույթերը ներքին տարածությունը բաժանում են երեք նավի, որոնցից կենտրոնականն ամ. ավարտվում է կիսաշրջանաձև խորանով, կողայինները՝ քառակուսի, խաչաձև-թաղածածկ ավանդատներով: Խորանի տակ, ըստ ավանդության, Գայանեի դամբարանն է (ուղղանկյուն թաղածածկ, փոքր սենյակ է՝ հվ.-աե. ավանդատնից բացվող մուտքով):

Տաճարն աչքի է ընկնում պարզությամբ, ճարտարապետական-գեղարվեստական հատկանիշներով, համոզիչ տարածական ձևերով: Կոնստրուկտիվ տարրերը (տրոմպեր, թաղեր, կամարներ) կատարված են մեծ վարպետությամբ: Կառուցված է դարչնագույն սրբատաշ տուֆից: Պատերին կան քարտաշ վարպետների VII դ. բնորոշ բազմաթիվ նշաններ:

1652 թ. Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսի օրոք հիմնովին վերակառուցվել է. նորոգվել են պատերը, վերականգնվել են ծածկը և գմբեթը՝ չխաթարելով տաճարի հիմնական ծավալային համակարգը: 1688 թ. Եղիազար Ա Այնթապցին կառուցել է վանքի միաբանության շենքերը, պարիսպը, եկեղեցու ամ. ճակատին կից եռակամար գավիթ-սրահը, հս. ու հվ. ծայրերին՝ Սուրբ սեղաններով Պողոս և Պետրոս առաքյալներին նվիրված մատուռները: Գավիթ-սրահը հետագայում ծառայել է որպես կաթողիկոսների տապանատուն:

XIX դ. վանահայր Վահան Բաստամյանցը նորոգել է վանքը, կառուցել ամ. կամարակապ դարպասը, վանահոր և միաբանների բնակելի շենքերը, հիմնել դպրոց և տպարան:

Եկեղեցին բազմիցս նորոգվել է. 1959-60 ա.կան թթ. վերանորոգման, տարածքի բարեկարգման աշխատանքներին զուգահեռ՝ բակում կառուցվել է մատաղատուն, աղբյուր (ճարտարապետ Ռ. Իսրայելյան):

Եկեղեցու շրջակա գերեզմանոցում բարձրաստիճան հոգևորականների, գրական հերոսների (Րաֆֆու «Խենթ»-ը, Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վեպի հերոս՝ Մախլուտոն), Սարգարապատի ճակատամարտի զորահրամանատար Դանիել Բեկ-Փիրումյանի, երգչուհի Լուսինե Չաքարյանի և այլ նշանավոր մարդկանց գերեզմաններն են:



Գրականություն

1. Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան, Ե. 2002, էջ371-372:

It is one of the main holy shrines of the Armenian Apostolic Church. It is located in the southern part of the town of Vagarshapat. The foundation of the church is connected with the church tradition of St. Hripsime and Gayane. According to the chronicle, the church was constructed by the Catholicos Ezr in 630 on territory of the chapel built in the IV century over the grave of Hegumeness Gayane, one of the Christian virgins who fled to Armenia from the persecutions of the Roman emperor Diocletian and died martyr.

The church is four-pylon domed basil with harmonious proportions and an impressive interior. The four -dome pylons divide the inner space into three naves, the central one of which in the eastern part ends with a semicircular altar, and the lateral ones with square cross celure. Traditionally the tomb of Gayane (a small vaulted rectangular room with an entrance from the south-east celure) is located under the altar.


The temple stands out for its simplicity, architectural and artistic properties, and persuasive spatial forms. The structural elements (trompas, pendentives, arches) are executed with great skill. The church is built of brown polished tufa. You can see a lot of signs on the walls, typical to the masters of the VII century.

In 1652, in the time of the Catholicos Pilipos I Agbaketsi, the temple was completely reconstructed, the walls were repaired, the roof and dome restored, without breaking the main volume system of the church. In 1688, Eghiazar I Ayntaptsi built the buildings, the fence of the order of the church and the three-barreled hall-porch, adjacent to the western facade of the church, and the chapel dedicated to the apostles Peter and Paul at the north and south ends. Later the hall forechurch served as a tomb for the Catholicoses.

In the XIX century the abbot of the monastery Vahan Bastamtsyan also carried out repair and construction works - he built western arched gates, residential buildings for the abbots and monks, founded a school and a printing house.

The church was repeatedly repaired during 1959-1960, along with the repair work and improvement work, a place for sacrifice and a stone spring (architect R. Israelyan) were built in the courtyard.

In the cemetery next to the church there are graves of high-ranking clergy, literary heroes («The Madman» by Raffi, Makhuto, a hero of Khachik Dashtents's novel «A Call of the Plowmen»), Daniel Bek-Pirumyan, the warlord of the Sardarapat battle, a singer Lusine Zakaryan and other famous personalities.



Bibliography:

1. "Christian Armenia", Encyclopedia, Y., 2002, pp. 371-372.





ՍԲ. ՀՈՒՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑԻ
THE CHURCH OF ST. HRIPSIME

Պատմական Վաղարշապատ քաղաքի հս.-աե. կողմում է: Հիմնադրումը կապված է Հայաստանում քրիստոնեության տարածման պատմության հետ: Ըստ ավանդության, հռոմեական կայսր Դիոկղետիանոսի հալածանքներից Հայաստան փախած, քրիստոնեությունը քարոզող և Տրդատ Գ Մեծի հրամանով մահապատժի ենթարկված Հռիփսիմե կույսի գերեզմանի վրա Գրիգոր Ա Պարթևը (Լուսավորիչ) հիմնում է վկայարան, որի շինաքարերը «մեղքերը քափող» Տրդատն, իբրև բերում է Մասիս սարից: Պարսկական արշավանքներից կործանված և IV դ. վերջին Սահակ Պարթևի վերաշինած դամբարանի (եղել է քառալույս կամարակապ ծածկով երկհարկ կառույց) կիսագետնափոր հանգստարանի վրա 618 թ. Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսը կառուցում է Սբ. Հռիփսիմեի տաճարը: Կառուցման վերաբերյալ պահպանվել են շինարարական երկու արձանագրություններ (ավագ խորանի վերին մասում և ամ ճակատին) ու պատմիչների տեղեկություններ:

Հորինվածքով պատկանում է միջնադարյան Հայաստանի եկեղեցական կառույցների առավել կատարելագործված տիպին՝ ձևավորված VI դ.: Ներքուստ խաչաձև է, որն ստեղծվել է գմբեթատակ ծավալին կցված չորս խորաններով ու շրջանի $\frac{3}{4}$ հատվածքի անկյունային խորշերով: Արտաքինից պարփակված է ուղղանկյուն ծավալի մեջ: Անկյունային, քառակուսի հատակագծով, խաչաձև- թաղածածկ չորս ավանդատները աղոթասրահի հետ կապվում են խորշերով: Խորանների գմբեթադնների և նրանց տանիքների մեջ թողնված սնամեջ տարածությունները նպաստել են եկեղեցու գերազանց ակուստիկային և ծառայել որպես գաղտնարաններ: Ներքին տարածությունը ամբողջական է, ընդարձակ, ամփոփ ու սլացիկ: Աղոթասրահի ութ զանգվածեղ որմնամույթերի ուղղաձիգ ընդգծումները նրան տալիս են վերասլացություն: Ծավալային մշակման պսակն է կազմում ցածրանիստ համաչափություններ ունեցող 16 նիստանի թմբուկով, սալածածկ վեղարով գմբեթը: Արտաքին պատերի զանգվածեղությունը թեթևացված է հարթություններն ակոսող սեղանաձև խորշերով: Պատերին պահպանվել են վարպետների բազմաթիվ նշանագրեր:

Ավագ խորանի տակ Սուրբ Հռիփսիմեի դամբարանն է, որը ամ.-աե. ձգվող, խորանով ավարտվող, պայտածև թաղածածկով կառուցվածք է, մուտքը՝ հս.-աե. ավանդատից:

Տաճարը միջնադարյան ճարտարապետության հոյակերտ կոթողներից է, գեղարվեստական կերպարը վեհ է, հանդիսավոր ու տպավորիչ: Այն մեծ ազդեցություն է թողել հայկական ճարտարապետության զարգացման վրա՝ ելակետ դառնալով նույնատիպ մի շարք «Հռիփսիմեատիպ» կառույցների:

Տաճարը պահպանվել է առանց արմատական վերակառուցումների: Ըստ ուսումնասիրությունների՝ թերևս X դ. վերանորոգվել է գմբեթը: 1653 թ. Փիլիպոս կաթողիկոսը կատարել է նորոգման աշխատանքներ և ամ. մուտքի դիմաց կառուցել բաց գավիթ: Հետագա դարերում եկեղեցին շրջափակվել է աղյուսաշեն պարսպով ու բուրգերով (1776 թ.), գավթի վրա կառուցվել է զանգակատունը (1880 թ.), կառուցվել են աե. և հվ. սրբատաշ քարե պարիսպները, բնակելի տունը, բակի օժանդակ կառույցները (1894 թ.): Չգավի նորոգումներ են կատարվել 1898 թ.: 1958-1959 թթ. հեռացվել է ներսի տեսքը խաթարող սվաղը: Նորոգման ժամանակ բացվել են հեյլենիստական տաճարի քանդակազարդ քիվի բեկորներ, որոնք վկայում են, որ տարածքում եղել է հեթանոսական տաճար: 1970-ական թթ. պեղումները աե. կողմում բացել են նախաքրիստոնեական և վաղ քրիստոնեական շրջանի թաղումներ և վաղ միջնադարի միանավ եկեղեցի՝ արտաքուստ հնգանիստ խորանով:

Գրականություն

1. Մարության Տ., Ավանի տաճարը և համանման հուշարձանները, Ե. 1976:
2. Якобсон А., Очерки истории зодчества Армении V-XVII вв., М.-Л. 1950.
3. Еремян А., Храм Рипсиме, Е. 1955.

It is located in the north-eastern part of the historic town of Vagarshapat. The erection is connected with the history of the spread of Christianity in Armenia. According to the church tradition, over the grave of the preacher of Christianity, the Virgin Hripsime, who fled to Armenia because of the persecutions by the Roman Emperor Diocletian and executed by the order of Trdat III the Great, Grigory I Partev (Illuminator) built a chapel in the name of the martyr, the chapel stones were allegedly brought from the mountain Masis (Ararat) by "redeeming sins" Trdat. Above the semi-earthly tomb of the grave (four-columned two-storey building with arched overlapping), destroyed after the Persian crusade and restored by the end of the IV century by Sahak Partev, Catholicos Komitas I Akhtsekhtsi built the church of St. Hripsime in 618. There are two inscriptions on the construction (one is in the upper part of the senior altar and the other is on the western facade), as well as information of historiographers.

By its design, it belongs to the most improved type of church buildings of medieval Armenia, constructed in the VI century. Inside the church building is of cross shape, formed by four altars, attached to the under-cased volume and corner niches with a $\frac{3}{4}$ -cut circle. Outside, the temple is enclosed in a rectangular volume. Four corner vaulted cross-shaped celures with a square plan are connected with the prayer hall through niches. Hollow spaces, left between the domed altars and their roofs, provided excellent acoustics of the church and served as hiding places. The interior space is complete, spacious, finished and impetuous. The vertical underlines of eight massive vertical ribs (it can be "buttress" or wall pylons) give the church some highness. The crown of the great design is a dome with a 16-faceted drum with low proportions and a tiled steeple. The massiveness of the outer walls is facilitated by trapezoidal niches (hollows, concavities) furrowing the planes. There are many inscriptions and signs of masters on the walls.

There is the tomb of St. Hripsime under the upper altar, it is stretched from the west to the east, completed with a rectangular design with a horseshoe-shaped vaulted overlapping, and the entrance is from the north-east celure.

The temple is one of the most magnificent constructions of the medieval architecture, with its majestic artistic image, solemn and impressive. It had a tremendous impact on the development of the Armenian architecture, becoming the starting point for a number of similar "Hripsime-like" creations.

The temple was preserved without fundamental reconstructions. According to the research, it is only possible that in the X century the dome was repaired. In 1653 the Catholicos Pilipos began repair work and built an open forechurch in front of the western entrance. In the following centuries, a brick fence was erected around the church, the domes were built (1776), the bell tower (1880) was reconstructed, and the eastern and western fences of polished stone, the dwelling house and various outbuildings in the courtyard (1894) were also built. Significant work was done in 1898. And in 1958-1959 the plaster was removed, it spoilt the internal appearance. During the restoration work, fragments of the cornice with sculptural ornamentation of the Hellenistic church were revealed, indicating the existence of a pagan temple in the area in the past. In the 1970s, excavations in the eastern part revealed pre-Christian and early Christian burials and an early medieval single-nave church with an externally pentagonal altar.

Bibliography:

1. Marutyan T., «The temple of Avan and similar monuments», Y. 1976.
2. Jacobson A., «Essay history architecture Armenia V-XVII centuries», M-L, 1950.
3. Eremyan A., «The Church of Hripsime», Y., 1955.





ՍԲ. ՇՈՂԱԿԱԹ ԵԿԵՂԵՑԻ
THE CHURCH OF ST. SHOGHAKAT

Հիմնադրվել է Հայոց մայրաքաղաք Վաղարշապատի արքունական այգիների հնձանների տեղում, ըստ ավանդության՝ այն վայրում, ուր Հռիփսիմյան քրիստոնյա նահատակների վրա «շող է կաթել»:

Ամ. մուտքի արձանագրության համաձայն, 1694 թ. կառուցել է Նահապետ Ա Եդեսացի կաթողիկոսը՝ իշխան Աղամալ Շոռթեցու բարերարությամբ: Հորինվածքով «գմբեթավոր դահլիճ» տիպի կառույց է: Հատակագծի ձևերը և համաչափությունները բնորոշ են այդ տիպի վաղ միջնադարի հուշարձաններին, որից ենթադրվում է, թե կառուցվել է VI-VII դդ. շինության հիմքերի վրա: Ութանիստ թմբուկով գմբեթը ոչ թե կառույցի, այլ երկու զույգ որմնամույթերով դահլիճի կենտրոնում է՝ նույնատիպ հնագույն եկեղեցիների նման: Աղոթասրահն առ. ավարտվում է կիսաշրջան խորանով, կից՝ ուղղանկյուն, նեղ ավանդատներով (հվ. ավանդատան մեջ Սուրբ Մարիանեի տապանաքարն է «Սուրբ Շողակաթ» մակագրությամբ): Գլխավոր մուտքը բացվում է ամ. կից գավիթ-սրահից, որը կառուցվել է եկեղեցու հետ միաժամանակ: Ամ. ճակատի կենտրոնում կամարակապ մեծ բացվածք է, սրահը պսակված է զանգակատան ութասյուն ռոտոնդայով:

Սրահում թաղված են Նահապետ Ա Եդեսացի և Աբրահամ Գ Կրետացի կաթողիկոսները:

Կառուցված է դարչնագույն սրբատաշ տուֆից: 1960 թ. նորոգչական աշխատանքներ են կատարվել Վազգեն Ա կաթողիկոսի օրոք:

Եկեղեցուց հվ.-ամ. պեղումներով բացվել են սրբատաշ տուֆից կառուցված միանավ (IV-V դդ.) եկեղեցու ավերակները՝ բազմաստիճան որմնախարիսխի վրա, հվ. պատին արտաքուստ կից կիսաշրջանաձև խորանի առկայությունից ենթադրվում է, որ պատին կից եղել է սյունասրահ:



Գրականություն

1. Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Ե. 2002 թ. Էջ 827-828:
2. Ղևոնդ քահանա Հարությունյան, Սուրբ Շողակաթի կամ Մարիանե կույսի վանքը, «Էջմիածին» 1981, N 8, Էջ 38-41:

It was built on the territory of the wine pressing building of the royal gardens of the Armenian capital Vagharshapat, traditionally at the place where the ray of light came down from heaven upon Hripsime's martyrs (Shoghakat means "a drop of light"). According to the inscription above the western entrance to the church, it was built in 1694 by the Catholicos Nahabed I of Edessa, thanks to the patronage of Prince Aghamal Sorotetsi. According to the architectural concept, the church is a construction of the type "domed hall". The forms and proportions of the plan are typical to the monuments of the Early Middle Ages of this type, from which it can be assumed that the church was built on the foundation of the construction of the VI-VII centuries. The dome with the octagonal drum is located in the center not of the building itself, but the hall with two pairs of vertical ribs ("buttress"), similar to the old churches. From the east the prayer hall ends with a semicircular altar, with adjoining narrow rectangular celure (in the southern celure there is a tombstone of St. Mariane with the inscription "Saint Shoghakat"). The main entrance opens from the porch on the west side, simultaneously built with the church. There is a large arched opening in the center of the western facade, and the hall is bordered by an eight-columned rotunda of the bell tower. The Catholicos Nahabed I of Edessa and Abraham Kretatsi are buried in the hall.

The church is built of brown, chestnut polished tufa.

In the 1960, the Catholicos Vazgen I began restoration work.

To the south-west of the church, during the excavations, the ruins of a single-nave church of polished tufa (IV-V), built on a multi-level foundation were found. The presence of a semi-circular altar near the southern wall from the outside allows us to suggest that the column hall once rose here.



Bibliography:

1. "Christian Armenia", Encyclopedia, Y., 2002, pp. 827-828.
2. Ghevond the priest Harutyunyan, « St. Shoghakat or St. Mariane Monastery, « Echmiatsin » 1981, N 8, pp. 38-41.





ՍԱՆԱՀԻՆԻ ԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
THE MONASTERY COMPLEX OF SANAHIN

Վանական համալիրը գտնվում է Ալավերդի քաղաքի վարչական կազմի մեջ մտնող Սանահին գյուղի կենտրոնական մասում, Դեբեդ գետի աջափնյա բարձրադիր սարավանդի վրա: Հենց ճանապարհի սկզբին, Դեբեդ գետի վրա Սանահինի մինչ օրս գործող պատմական կամուրջն է, որը XII դ. վերջերին կառուցել է Կյուրիկյան թագուհի Վանենին՝ վաղամեռիկ ամուսնու՝ Աբաս թագավորի հիշատակին: Ըստ ավանդության վանքը հիմնադրվել է IV դարում, երբ կանգնեցվել է Սբ. Նշանը՝ խաչը: Հին կառույցների մնացորդները նկատվում են Ամենափրկիչ եկեղեցու որմնաշարում: Վանական համալիրի ամենավաղ շինությունը՝ Սբ. Աստվածածին եկեղեցին X դարի 30-40-ական թթ., Աբաս Ա Բագրատունի թագավորի օրոք, կառուցել են քաղկեդոնական դավանանքը մերժելու համար բյուզանդական Ռոմանոս Ա կայսեր կողմից հալածված Պոլիկարպիոսի գլխավորությամբ մի խումբ կրոնավորներ: Այս իրողության մասին վկայում են պատմիչներ Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին, ինչպես նաև Հաղբատի վանքում հայտնաբերված խաչքարի արձանագրությունը: Իր արտաքին եզրագծով Սբ. Աստվածածին եկեղեցին ուղղանկյուն, իսկ ներքուստ խաչաձև, երկհարկ ավանդատներով կառույց է: 966 թվականին Աշոտ Գ Ռդորմած թագավորն ու Խոսրովանուշ թագուհին կառուցել են Սբ. Ամենափրկիչ եկեղեցին՝ իրենց որդիներ Կյուրիկեի /Գուրգենի/ և Սմբատի արևշատության համար: Սա նույնպես գմբեթավոր, ներքուստ խաչաձև հորինվածք է: Եկեղեցու սրբատաշ ճակատները հարդարված են որմնասյուներով ու գեղազարդ կամարներով: Ներքուստ պատերը ծածկված են եղել ճոխ ու բազմերանգ որմնանկարներով, որոնք մասամբ են պահպանվել: 979թ. Սմբատ Բ թագավորի հրովարտակով վանական համալիրը դարձել է Նորակազմ Կյուրիկյան թագավորության եպիսկոպոսական աթոռանիստը: 1061թ. կառուցվել է վանական համալիրի Սբ. Գրիգոր եկեղեցին: Սա փոքր, արտաքուստ կլոր, ներքուստ խաչաձև, քառախորան կառույց է: Գմբեթային կամարներն ու դրանք կրող փնջաձև որմնասյուները սլացիկություն են հաղորդում այս գոլտրիկ հուշարձանի ներքին տարածությանը: 1063թ. Հրանուշ թագուհին Սբ. Գրիգոր եկեղեցուն կից կառուցում




The monastery complex is situated in the central part of the village of Sanahin in the Lori Province of RA (now considered part of the city of Alaverdi), Debed Canyon of the Lori region, on the right bank of the Debed River. On the Debed River, there is the historical Sanahin Bridge, which was built by the Kyurikyan Queen Vaneni (Nane) at the end of the XII century to commemorate her untimely dead husband, King Abas I Kyurikyan. According to the tradition, the monastery complex was founded in the IV century, when the St. Nshan (Sign) Cross was erected at the site. The fragments of the old structures can be observed in the wall masonry of the St. Amenaprkich church. The earliest structures of the monastery complex - the church of St. Astvatsatsin (Holy Mother of God) was built in the 30s-40s of the X century during the reign of Abbas Bagratuni by a group of clergy, led by the Polikarpios persecuted by Romanos I Emperor, to reject the Chalcedonian sect. This fact was mentioned by the historians Kirakos Gandzaketsi and Vardan Areveltsi, as well as the in the inscription on the khachkar, found in the monastery of Haghpat. On the outside, the church of St. Astvatsatsin is a domed cross-wing church, and inside, rectangular with two-story annexes at each of the four corners. In 966 the Armenian King Ashot III Voghormats (Merciful) and Queen Khosrovanush founded the church of St. Amenaprkich (Holy Redeemer or All Savior) for the longevity of their sons Kyurike (Gourgen) and Smbat. It is also a domed and inside cross-shaped composition. The facades of the church were decorated with pilasters and ornamental arches. Inside the walls are covered with gorgeous and variegated frescoes, which remained partially. In 979, by the order of King Smbat II, the monastery complex served as Diocesan Bishopric Seat of the new Kyurikyan Kingdom. The St. Grigor chapel of the monastery was built in 1061. It is a miniature dome structure, circular on the outside with four apses on the inside. The dome arches and pilasters, supporting them, make the inner space of this cozy monument grace. In 1063, Queen Hranush built the monastery library, which is located at the church of St. Grigor.



THE MONASTERY COMPLEX OF SANAHIN

Ե վանքի գրատունը: Ուղղանկյուն հատակագծով կառույցի ծածկը իրականացված է որմնասյուներին հենվող իրար հպվող կամարներով: Հաստահեղույս պատերի մեջ ձեռագիր մատյանները պահելու համար կան հատուկ խորշեր: Համալիրի նշված կառույցները կես դար հետո հարակից կառուցված երկու խոշոր գավիթների միջոցով միահյուսվել են միասնական համալիրի մեջ: Գավիթներից առաջինը, որ կից է Սբ. Ամենափրկիչ եկեղեցու ամ. պատին, կառուցվել է 1181թ վանքի առաջնորդ Հովհաննեսի ժամանակ, ժամայր ճարտարապետի ձեռքով: Այն չորս սյուների վրա կանգնած խոշոր դահլիճ է, պսակված կենտրոնից լուսավորվող գմբեթով: Ուշագրավ են գեղակազմ, գնդաձև խոյակներով հոծ սյուները: Մյուս գավիթը կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցու ամ. մասում, Վաչե Վաչուտյանի նախաձեռնությամբ, 1211թ.: Գավթի ներքին եռանավ տարածքը ծածկված է հաստահեղույս մույթերի վրա հանգչող թաղերով: Լուսավորվում է հվ. ճակատի լայն, բաց կամարների միջոցով: Հատակը ծածկված է խիտ թաղումներով, իսկ պատերին բազմաթիվ վիմագիր արձանագրություններ կան: Սբ. Աստվածածին և Սբ. Ամենափրկիչ եկեղեցիների միջև առաջացած տարածության երկայնական պատերի կամարները նստելու հարմարեցված խորշեր են ստեղծել: Ավանդաբար այս երկարավուն սենյակը համարվել է Գրիգոր Մագիստրոսի ճեմարան, ուր ականավոր գիտնականը դասավանդել է իր սաներին: Համալիրի երևելի վանահայրերից Էր «մեծ հռետոր» հռչակված Դիոսկորոս Սանահնեցին: Նրա օրոք / 1039-1063թթ./ հոգևոր դպրոցը դարձել է ուսումնական մեծ կենտրոն, հարստացել է գրադարանը, գրվել, ծաղկվել և ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: Նրան աշակերտել և դպրոցում նաև դասավանդել են գիտնականներ Անանիա Սանահնեցին և Հակոբոս Զարափնեցին: Աստվածաբանությունից բացի դպրոցում դասավանդվել են փիլիսոփայություն, հռետորական արվեստ, երաժշտություն, բժշկություն, տոմարագիտություն: XII - XIII դդ. Սանահինում հայտնի էին վանահայրեր Գրիգոր Տուտեորդին, Հովհաննես Խաչենցին, Վարդանը: Մեծ համբավ է ունեցել վանահայր Գրիգոր Րաբունապետը, որը վանքին նվիրել է 13 ձեռագիր: Հիշատակության արժանի են Սանահինի վանական համալիրում ապրած ու ստեղծագործած տաղանդավոր ճարտարապետ ժամայրը և քանդակագործ-վարպետ Մխիթար Կազմողը, որը կերտել է Գրիգոր Տուտեորդուն նվիրված



The rectangular structure was built with arches that are leaning against the columns. There are special cells for storing manuscripts in the strongly constructed columns. Half a century later, the mentioned structures of the complex were formed into one complex with two massive narthexes. The first narthex, which is near the western wall of St. Amenaprkich church, was constructed in 1181 by architect Zhamhayr, under the head of monastery Hovhannes. It is a large hall, erected on four columns with a crowned dome lighted from the centre. Especially remarkable are the slender, spherical wide columns with chapters. The other northex was built in the western part of church St. Astvatsatsin in 1211 on the initiative of Vache Vachutyan. The inner three-nave space of the narthex is covered with vaults based on strongly constructed pilasters. It is lighted with wide, open arches on the southern facade. The floor is covered with the thick burials, and there are numerous lithographic inscriptions. The arches of the high walls between St. Astvatsatsin and St. created the cells for sitting. Traditionally, this long room was considered the seminary of Grigor Magister, where an outstanding scientist taught his students. Dioscoros Sanahnetsi, the «great speaker», was one of the most famous monks of the complex. In his period (1039-1063), the spiritual school became a great educational center, the library was enriched and numerous manuscripts were written and copied. Anania Sanahetsi and Hakopos Qarapnetsi were his students, and also taught at the school. In addition to theology, at school they also taught philosophy, rhetorical art, music, medicine, and history. Grigor Tutevordi, Hovhannes Khachentsi and Vardan were famous in Sanahin in the XII-XIII cc. The monk Grigor Rabunapet had great fame and donated 13 monasteries to the monastery. It is worth to mention the talented architect Zhamahayr, who lived and worked in the monastery complex and the master-sculptor Mhitar Kazmog, who created a beautiful khachkar dedicated to Grigor Tutenvordi. In the XIV-XVcc., there was a new rise of writing. The most memorable is «Qotuk» of Sanahin. The three-storey bell tower of the XIII c. was built near the north-west corner of the second narthex. It is a square domed columned structure.



THE MONASTERY COMPLEX OF SANAHIN

գեղաքանդակ խաչքարը: XIV - XV դդ վանական համալիրում նոր վերելք է ապրել գրչությունը: Առավել հիշարժան է Սանահինի «Քոթուկը»: Երկրորդ գավթի հս.-ամ. անկյանը կից է XIII դ. կառուցված եռահարկ զանգակատունը: Այն քառակուսի հատակագծով, գմբեթավոր սյունաշարքով պսակված շինություն է:

Բացի նշված հիմնական կառույցներից, վանքի տարածքում և նրա շուրջը պահպանվել են մի շարք այլ կառույցներ ևս: Դրանցից են Սպասալարների դամբարանը, Սբ. Հարություն եկեղեցին, որոնք առանձին թաղակապ կառույցներ են: Ուշագրավ են համալիրի բազմաթիվ խաչքարերը: Հիշարժան է Գրիգոր Տուտեղորդու մահարձանը, որը կերտվել է 1184թ. և կանգնած է Սբ. Հարություն եկեղեցուց քիչ հս.: Երկրորդ գավթի ամ. ճակատի դիմաց կանգնած է նաև Սարգսի գեղաքանդակ խաչքարը: Իր տեսակի մեջ արժեքավոր կառույցներից է նաև Սանահին գյուղի ամ. ծայրին կառուցված աղբյուրը, որը ըստ վիմագիր արձանագրության, կառուցել է Մխիթար Վանականը 1255թ. և կառույցի շինարարությանը նվիրել է «հարյուր արծաթ դրամ»: Աղբյուրը երկու կամարավոր որմնանցքով և ծանրազանգված, կլոր սյունով ձևավորված ճակատով, ուղղանկյուն հատակագծով կառույց է:

XIV դ. սկզբին թուլացել ու տրոհվել է Չաքարյանների իշխանական տունը և Սանահին գյուղն իր շրջակայքով դարձել է Արղության Երկայնաբազուկների սեփականությունը մինչև XXդ. սկիզբը: Վանական համալիրը ժամանակ առ ժամանակ ենթարկվել է նորոգումների: XVIIդ կեսերին Սարգիս արքեպիսկոպոս Արղությանի առաջնորդության օրոք էապես նորոգվել են ժամանակի և երկրաշարժերի հետևանքով վնասված կառույցները: 1831թ. հս պարսպին կից միակամար աղբյուր է կառուցել վանքի առաջնորդ Հարություն արք. Տեր-Բարսեղյանը: XXդ. սկզբին վանքի գործունեությունը դադարեցվել է:

Խորհրդային տարիներին, որպես պատմամշակութային հուշարձան, պետության կողմից կատարվել են վերականգնման աշխատանքներ: Համալիրը մասնակի նորոգվել է 1930 և 1939թթ. Ա. Թամանյանի ղեկավարությամբ: 1953-1954թթ. վերանորոգվել է Սբ. Ամենափրկիչ եկեղեցին, 1960թ. բարեկարգվել է տարածքն ու վերանորոգվել երկրորդ գավիթը/ նախագավիթը/: 2001թ. Սանահինի վանական համալիրն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային արժեքների շարքում:

Գրականություն

1. Հովհաննիսյան Կ., Սանահին-Հաղբատ, Ե., 1975.:
2. Քրիստոնյա Հայաստան, Հանրագիտարան, Ե., 2002.:
3. Ծաղկաքաղ հայկական հուշարձանների, Ա/Թ:
4. Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Ե., 1957:
5. Լեոն, Հայոց պատմություն, հ. 2, Ե., 1947:

In addition to the mentioned main structures, there are a number of other preserved structures on the territory of the monastery and around it. Among them are the family tomb of Spasalars and the church of St. Harutyun, which are separate block structures. Many khachkars of the complex are attractive. The memorial statue of Grigor Tutenvordi, which was created in 1184 and is located to the north near the church of St. Harutyun is remarkable. In front of the western facade of the second narthex, there is also khachkar of St. Sarkis. One of the most valuable buildings is also a water source, which was built at the western end of the village of Sanahin, which according to the lithographic inscription, was built by Mkhitar Vanakan in 1255 (he donated «one hundred silver coins» to the construction). The water source is a rectangular plan structure with two arched walls and facade, decorated with massive round columns.

At the beginning of the XIV c., the Zakarian's Princely House weakened and disintegrated, and the village of Sanahin, with its surroundings, became the property of the Arghutyan-Erkaynabazuk until the beginning of the XX c.

The monastery complex was periodically renovated. In the middle of the XVII century, the structures damaged by time and earthquake were substantially renovated under the leadership of Archbishop Sarkis Arghutyan.

In 1831, the leader of the monastery Archbishop Harutyun Ter-Baghdasaryan built an arched water source adjacent to the northern wall. In the beginning of the XX century, the monastery stopped its activity.

During the Soviet times, as a historical and cultural monument, the state carried out restoration work. The complex was partially renovated in 1930 and 1939 by A. Tamanyan. The church St. Amenaprkich was renovated in 1953-1954, and in 1960, they improved the area and renovated the second narthex.

In 2001, the monastery complex was included in the UNESCO World Heritage List.

Bibliography:

1. Hovhannisyan K., «Sanahin-Haghbat», Y., 1975.
2. «Christian Armenia», Encyclopedia; Y., 2002.
3. «Selection of the Armenian Monuments»; Y., 2012.
4. K. Ghafadarian, «The Monastery of Sanahin and its Inscriptions»; Y., 1957.
5. Leo, «Armenian History», Y., 1947.





ՀԱՂԲԱՏԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
THE MONASTERY OF HAGHPAT

Հաղբատի վանքը Դեբեդի կիրճի աջ ափին է, համանուն գյուղի տարածքում, բարձր սարահարթի վրա, որը եզերվում է մի կողմից Լոռու լեռնապարով՝ պսակված Սբ. Լույս և Տերունական գագաթներով, մյուս կողմից՝ Կայան բերդ և Սաղխձոր կիրճերով: Հաղբատում կյանքը սկզբնավորվել է անհիշելի ժամանակներից, այդ են վկայում պեղումներից հայտնաբերված հարուստ հնագիտական նյութերը: Վանքը XII դարի երկրորդ կեսից դառնում է Կյուրիկյան թագավորության հոգևոր կենտրոնը, Սանահինից այստեղ է տեղափոխվում թագավորների տոհմական գերեզմանատունը: 1081թ. այստեղ կաթողիկոս Ե օծվում Անի-Շիրակի եպիսկոպոս Բարսեղը: XI-XIIIդդ. Հայաստանում հայտնի էին Հաղբատի դպրոցը և գրատունը: Այստեղ ուսուցանել են քերականություն, հռետորություն, փիլիսոփայություն, պատմություն, աստվածաբանություն, երաժշտություն: Նշանավոր ուսուցիչներ էին տոմարագետ, փիլիսոփա Հովհաննես Իմաստասերը / Սարկավագը/, նրա աշակերտներ՝ ժամանակագիրներ Սամուել Անեցին, Երեմիա Անձրեհկը և այլն: XIII դ. կրոնամշակութային գործիչներից էին իրավագետ Դավիթ Ալավկա որդին, Դավիթ Զոբայրեցին, Վարդան Բարձրաբերդցին, Իգնատիոսը, բանաստեղծ, քերական Հովհաննես Երզնկացին: XII դ. երկրորդ կեսից Հաղբատը պատկանում է Մահկանաբերդի Արծրունիներին, ապա Չաքարյաններին: Ուշ միջնադարում Վրաստանի, Իմերեթի, Աբխազիայի, Բորչալուի և Ղազախի հայկական եկեղեցական վիճակները /բացի Սանահինից/ ենթարկվում էին Հաղբատի արքեպիսկոպոսին: XIXդ. սկզբին Հաղբատի առաջնորդներ Հովհաննես Անեցին, Աստվածատուր Արցախեցին, Ներսես Աշտարակեցին միաժամանակ վարում էին Վիրահայոց առաջնորդությունը: XVIIIդ. վերջերին մի քանի տարի Հաղբատում կրոնավորել է միջնադարի մեծագույն քնարերգու Սայաթ Նովան: 1822-1826թթ. այստեղ ապաստանել է Եփրեմ կաթողիկոսը: 1830-1831թթ. Հաղբատում աքսորական էր Հարություն քահանա Ալամդարյանը:

Հաղբատի վանական համալիրը բաղկացած է պաշտամունքային և աշխարհիկ շինություններից, որոնք շրջափակված են աշտարակավոր պարսպապատերով: Վերջիններս ունեն երկու մուտք, որոնցից գլխավորը արևմուտքից է:

Հաղբատի վանական համալիրը հիմնադրվել է 976թ. Աշոտ Ողորմած թագավորի և նրա կնոջ՝ Խոսրովանուշ թագուհու նախաձեռնությամբ՝ իրենց Սմբատ և Գուրգեն որդիների արևշատության համար: Համալիրի գլխավոր և ամենահին կառույցը Սբ. Նշան եկեղեցին է, որի կառուցումն սկսվել է 976թ. և ավարտվել 991թ.: Վանքի հիմնադիր վանահայրն է եղել Հայր Սիմեոնը, իսկ Տիրանուն երեցը նրա օգնականը:



The monastery of Haghpat is located on the right bank of the Debed River, in the village of the same name (the village of Haghpat), on a high plateau, which is surrounded on one side by the mountain ranges of Lori (protected by the St. Luys and Terunakan mountains), on the other hand, by the Kayan Berd and Saghkhdzor fortresses. The life in Haghpat started from time immemorial. It is evidenced by rich archaeological finds discovered during the excavations. From the second half of XII c., the monastery became the spiritual center of the Kyurikian Kingdom. The royal family tomb was also transferred here from Sanahin. In 1081, the Bishop of Ani-Shirak Barsegh was consecrated as Catholicos here. In the XI-XIII centuries, the school and center for manuscript production of Haghpat were famous in Armenia. Here they taught grammar, rhetoric, philosophy, history, theology and music. The most famous teachers were the historian and philosopher Hovhannes Sarkavag (Imastaser), his pupils - the chroniclers Samuel Anetsi, Yeremia Andzrevik and others. Among religious and cultural figures of the XII century were the son of the lawyer David Alavkavordi, David Kobayretsi, Vardan Bardzraberdti, Ignatios, poet, Hovhannes Yerznkatsi. From the second half of the XII c., Haghpat belonged to the Artsrunis of Mahkanaberd, then to the Zakarians. In the late middle ages, the Armenian churches (except Sanahin) of Georgia, Imereti, Abkhazia, Borchalu and Ghazakh were under the control of the Archbishop of Haghpat. At the beginning of the XIX c., the religious leaders of Haghpat Hovhannes Aknetsi, Astvatsatur Artsakhetsi, Nerses Ashtaraketsi, simultaneously led the Georgian-Armenian Diocese. At the end of the XVIII c., the greatest medieval Armenian ashik (folk singer-songwriter) Sayat-Nova a clergyman in Haghpat for several years. Yeprem Catholicos settled here during 1822-1826. In 1830-1831, the priest Harutyun Alamdaryan was exiled to Haghpat.

The monastery of Haghpat consists of pagan and secular structures, which are surrounded by towery walls. The latter have two entrances, the main of which is in the west side.

The monastery of Haghpat was founded in 976 on the initiative of the King Ashot III Voghormats (Merciful) and his wife Queen Khosrovanush for the longevity of their sons Kyurike (Gourgen) and Smbat. The main and oldest structure of the complex is the church of St. Nshan, the construction of which started in 976 and finished in 991. The founder of the monastery was the Abbot Father Simeon, and the elder priest Tiranun was his assistant.



THE MONASTERY OF HAGHPAT

Սբ. Նշան եկեղեցին արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև դահլիճ է, որի կենտրոնում կլոր թմբուկով լայնանիստ գմբեթն է: Ներքուստ հարդարված է որմնանկարներով: Եկեղեցին հետագա դարերում շրջապատվել է զանազան հավելյալ կառույցներով, որոնք քողարկել են ամ. և հս. ճակատների գեղաքանդակ շքամուտքերը և պատուհանները: Սբ. Նշան եկեղեցուն ամ. կողմից կից կառուցվել է Հաղբատի գավիթ-ժամատունը, որը համալիրի ամենանշանավոր ճարտարապետական կառույցն է: Նրա տեղում սկզբնապես 1185թ. Կյուրիկե III թագավորի դուստր Մարիամի հրամանով կառուցված է եղել գավիթ՝ այնտեղ թաղված իր հորաքույր Ռուզուքանի և մոր՝ Թամարի գերեզմանների վրա, որպես Կյուրիկյան թագավորական տան անդամների տապանատուն: Մարիամաշեն հին գավիթը, որից պահպանվել են հս. և հվ. ծայրամասերը, եղել է հս.-հվ. ձգված երկթեք տանիքով, թաղակապ շինություն: Վանքի առաջնորդ Հովհաննես Խաչենեցին 1208-1210թթ. քանդել է հինը և կառուցել ներկայիս գավիթը, որը հայկական միջնադարյան ճարտարապետության գլուխգործոցներից է և եզակի օրինակ ողջ միջնադարի համար: Այն ուղղանկյուն հատակագծով, եկեղեցու ամ. պատին կից երկու զույգ կրկնահարկ, փոքր ավանդատներով դահլիճ է: Հատակն ամբողջովին ծածկված է գետնին հավասար գերեզմանաքարերով, որոնց տակ թաղված են թագավորներ, նրանց ընտանիքի անդամներ, իշխաններ, բարերարներ և բարձրաստիճան հոգևորականներ: Ժամատան գլխավոր գեղեցկությունը նրա ծածկն է՝ առաստաղը, որ հիմնված է մոտ 12-ական մ. բացվածք ունեցող երկու զույգ միմյանց խաչվող կամարների վրա: Այդ կամարների հիմքերը ժամատան երեք կողմերում հենվում են պատերին կից որմնասյուների, իսկ ամ. կողմում պատից մոտ երեք մ. հեռու գտնվող սյուների վրա: Վերոհիշյալ խաչվող կամարների գլխին առաջացած քառակուսու մեջ դարձյալ խաչվող, բայց ավելի փոքր կամարներ են, որոնք ժամատան կենտրոնական մասն ավելի վեր են բարձրացնում և դահլիճին տալիս սլացիկ տեսք: Վերին կամարների միջև ընկած գմբեթավորվող տարածությունը բաժանված է 9 մասերի, որոնցից ութ կողմնակիները հարդարված են գունավոր քարերով, իսկ կենտրոնականը ծառայում է որպես լուսամուտ և տանիքի վրա ավարտվում վեց սյուների վրա նստած սրագագաթ կաթողիկեով: Ժամատունը մեզ է հասել հիմնականում իր նախնական տեսքով:



The main church of St. Nshan is a hall, rectangular outside and cross-shaped inside, in the center of which there is a wide dome with a round drum. The interior is decorated with frescoes. In the subsequent centuries, the church was surrounded by many additional structures, which covered the beautifully carved portals and windows of the western and northern facades. On the western side of the church of St. Nshan there is the adjacent gavit (narthex) of the Haghpat, which is the most significant architectural structure of the complex. Originally, on its place, there was a gavit built in 1185 on order of the daughter of King Kyurike III Princess Mariam, on the graves of her aunt Rousouqan and mother Tamar, as a mausoleum for the Kiurikian family. The Mariamashen old gavit (built by Mariam), from which only the northern and southern edges are preserved, was an arched construction with a gable roof stretched in a north–south direction. The religious leader of the monastery Hovhannes Khachentsi in 1208-1210 demolished the old gavit and built the current one, which is one of the masterpieces of Armenian medieval architecture and a unique example for the whole Middle Ages. It is a hall with rectangular layout, two pairs of double-storied, small sacristies adjacent to the western wall of the church. The floor is completely covered with flat gravestones of the kings, their family members, princes, philanthropists and high-ranked clergymen. The main beauty of the gavit is the ceiling, which is based on two pairs of crossed arches (not larger than 12 meters). The bases of the arches are arranged on pilasters adjacent to the walls on the three sides of the gavit, and on the western side, on columns erected about three meters away from the wall. Inside the square, formed on the above-mentioned crucial arches, there are also crossed, but smaller arches, which expands the space, «lifts» the inner room and make the hall more slender. The domed space between the upper arches is divided into 9 parts: the eight lateral spaces are decorated with colored stones, and the central space serves as a window and ends with a gabled roof sat on six columns. The gavit reached us essentially in its original form.



THE MONASTERY OF HAGHPAT

Մեծ համբավ է վայելել XI դարում կառուցված Հաղբատի գրատունը: Նա համարվել է մեծ և կատարյալ մատենադարաններից մեկը, որտեղ եկեղեցու հայրերը պահել են գրավոր շատ վկայություններ: Հաղբատն ունեցել է իր գրչության դպրոցը. այստեղ գրվել ու արտագրվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնք համարվել են ընտիր և գրագետ օրինակներ: Նշանավոր ձեռագրերից է Հաղբատի 1211թ. Ավետարանը, որը ծաղկել է Նկարիչ Մարգարեն: Հաղբատի գրատունն իր ներսում, Սանահինի գրատան նման, պատերի մեջ ունի գրքեր պահելու համար նախատեսված խորը խորշեր: Սկզբում գրատան ծածկը եղել է փայտե գմբեթավոր, երդիկի լայն բացվածքով, իսկ XIIIդ. կատարված նորոգության ժամանակ այն փոխարինվել է քարե խաչվող կամարներով երդիկավոր ծածկով: Այդ վերակառուցման ժամանակ էլ հավանաբար կառուցվել է փոքր գավիթը: Վերջինս մի բաց նախասրահ է Սբ. Նշանի և ժամատան արանքում: Փոքր գավթում է գտնվում բարձր պատվանդանին կանգնեցված մի հսկա խաչքար, որը գավթի կառուցումից հետո, 1273թ., կանգնեցրել է Հովհաննես առաջնորդը՝ այդ ժամանակի ամենանշանավոր իշխան, աթաբեկ և ամիրսպալասար Սադունի արևշատության և օգնականության համար: Այդ խաչքարի թիկունքին է փորագրված Հովհաննեսի շինարարական գործունեության և վանքի նվիրատվությունների մասին ընդարձակ արձանագրությունը: Այս խաչքարն իր ոճով ու բնույթով առանցնալու է մյուս խաչքարերից. դրա վրա ոչ թե փոխաբերորեն միայն խաչ է փորագրված, որ պետք է Զրիստոսի խաչելության գաղափարը տար, այլ խաչքարի վրա պատկերված է Զրիստոսի կերպարանքն ամբողջ հասակով, թևատարած զամված խաչին: Նրա շուրջ լուսապսակներով պատկերված են զույգ Մարիամները, տասներկու առաքյալները, իսկ խաչքարի վերնամասում՝ սրբեր ու հրեշտակներ: Խաչքարի դիմային մասում, քանդակների հետ միասին, փորագիր և ուռուցիկ տառերով Զրիստոսին ու Նրա խաչելությանը վերաբերող արձանագրություններ են: Այս խաչքարը հայտնի է « Ամենափրկիչ» անունով, որն ըստ Կ. Ղաֆադարյանի կերտել է քանդակագործ Վահրամը 1273թ.:

Գլխավոր եկեղեցու հս. կողմում կառուցված մյուս ժամատունը քառակուսի հատակագծով, չորս սյուների վրա հենվող, երդիկավոր բացվածք ունեցող գմբեթով կառույց է: Ըստ պատմիչ Կիրակոս Գանձակեցու այս ժամատունը կառուցվել է Համազասպ առաջնորդի օրոք 1253թ.: Կառույցի հատակին կան արձանագիր և պարզունակ տապանաքարեր:

Համալիրի մաս է կազմում վանքի պարսպի ներսում, հվ-ամ անկյունին մոտ, մեծ ժամատան հվ. մասում, ըստ արձանագրության 1025թ. կառուցված Սբ. Գրիգոր փոքր եկեղեցին: Դա արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև, չորս ավանդատներով, թաղակապ ծածկով, երկթեք, սալածածկ տանիքով կառույց է:

Իր ձևով ու հորինվածքով հայ միջնադարյան ճարտարապետության նշանավոր կառույցներից է Հաղբատի զանգակատունը, որը կառուցված է վանքի բակի աե. բարձրադիր մասում և իր վեհությամբ իշխում է մյուս կառույցների վրա: Այն հիմքում խաչաձև, եռահարկ, բազմախորան եկեղեցի է, որի վրա բարձրացող գմբեթի մեջ կախվել են վանքի զանգակները:

Վանքի պարսպի ներսում, Համազասպի կառուցած ժամատան հս.-ամ. մասում է գտնվում Ուքանանց իշխանական տան գերեզմանոցը, որը որպես գերեզմանային կառույց հազվագյուտ նմուշ է: Այն հվ.-հս. ուղղվածությամբ իրար կից երեք մատուռներ են, որոնց վրա դրված են եղել մեկական գեղազարդ խաչքար, այժմ կենտրոնական խաչքարը տեղահանված է, մնացել է միայն պատվանդանը: Մատուռների ամ. ճակատները և ուղղանկյուն մուտքերը, խաչքարերի պատվանդանները քանդակներով են հարդարված: Կառույցների թաղակապ ծածկերը ավարտվում են հարթ տանիքով: Խաչքարերի թիկունքներն արձանագիր են:

Վանքի պարսպի հս.-աե. անկյունում է գտնվում Հաղբատի սեղանատունը: Այն աշխարհիկ, խաչվող կամարներով ծածկվող, զույգ հավասարակողմ քառանկյունի դահլիճներից կազմված

The scriptorium (book depository) of Haghpat Monastery, built in the XI c., had a great reputation. It was considered one of the great and perfect matenadarans, where the fathers of the church kept many manuscripts. Haghpat had its own manuscript center: numerous manuscripts (which were considered literate examples) were written and copied here. One of the most unique medieval manuscripts is the Gospel of Haghpat of 1211 created by the artist Markare. The scriptorium of Haghpat, like the library of Sanahin, inside its walls has deep cells for storing books. Originally, the roof of the scriptorium was wooden-domed, with wide garret, and during the reconstruction work, carried out in the XIII c., it was replaced by a stone garret-roof with crossed arches. The small gavit was probably built during that reconstruction. The latter is an open hall between the St. Nshan and gavit. In the small gavit there is a massive khachkar (cross-stone) erected on a high pedestal. It was erected in 1273, after the construction of the gavit, by the religious leader Hovhannes, in honor and for the longevity of the most prominent prince of that time - atabek (governor of the country) and amirspasalar (military commander) Sadun Artsruni. On the back of the khachkar there is an extensive inscription on construction activities and donations of Hovhannes to the monastery. This khachkar differs from other khachkars by its style and character: there is not just a cross engraved on it, which had to express the idea of the crucifixion of Christ, but the illustration of Christ in full growth, nailed to the cross. Around him, there are also two holy beings with nimbuses and the twelve apostles, and on the top of the khachkar - saints and angels. On the front of the khachkar, along with the sculptures, there is an inscription on Christ and his crucifixion. This khachkar is known as «Amenaprkich» («All-Savior»), which, according to K. Ghafadaryan, was created in 1273 by the sculptor Vahram.

The other gavit built on the northern side of the main church is a square-shaped structure, based on four columns and with a garret-dome. According to the historian Kirakos Gandzaketsi, this gavit was built in 1253 under the religious leadership of Hamazasp. On the floor of the building there is a record and primitive gravestones. On the floor of the structure there is an inscription and gravestones.

Another part of the complex is the church of St. Grigor, which, according to the inscription, was built in 1025 and is located inside the walls of the monastery, near the south-west corner, in the southern part of the great gavit. It is a rectangular building with an inscribed cross interior and chambers at the four corners. Outside it is outwardly rectangular and inwardly cross-shaped structure with sacristies at the four corners and arched, gable, tiled roof.

One of the most remarkable structures of Armenian medieval architecture is the belfry of Haghpat, which was built on the eastern upland part of the monastery and shines for its majesty among the other structures. It is a cross-shaped in plan, three-storey, multi-apse church, on which there are bells hanging in the towering dome.

Inside the walls of the monastery, in the north-western part of the gavit built by Hamazasp is located the Ukanants family sepulcher, which is a rare sample of a sepulchral structure. It is made from three memorial chapels adjacent each other to the south-north direction, on each of which there is an ornamental khachkar. Now the central khachkar is displaced, only the pedestal remained. The western facades, rectangular entrances of the chapels and pedestals of khachkars are decorated with sculptures. The arched coverings of the structures end with a flat roof. The back sides of khachkars are inscribed.

The dining-hall of the monastery is situated in the north-west corner of the monastery wall. It is a secular structure, consisting of a pair of equilateral quadrangular halls and crossed

կառույց է, որի ներքուստ պատերի տակ քարե նստարաններ կան: Լուսավորվում է գեթեթների երդիկաձև բացվածքներով:

Վանական համալիրը պարսպապատ է, այն ընդարձակ է և հարմարեցված է խորդուբորդ տեղանքին: Իր նախնական տեսքով պահպանվել է հատվածաբար: Պարիսպն իր մեջ ներառել է վանքի գլխավոր շինությունները: Պարսպի շարվածքում օգտագործվել է քարն ու թրծված աղյուսը կրաշաղախով, ամ. մասում պահպանվել են պարսպի բոլորածն մեծ բուրգերը: Պարսպի սահմանների մեջ և նրա շրջապատում կան վանքապատկան այլ կառույցներ, եկեղեցիներ, կամուրջներ, ջրաղաց, ուխտատեղիներ, ճգնարաններ, բազմաթիվ խաչքարեր:

Վանական համալիրի պարսպից դուրս ևս կան մի քանի եկեղեցիներ, մատուռներ, Կայան ամրոցն ու Կուսանաց անապատը, աղբյուրը և այլն:

Վանական համալիրը քանիցս վերանորոգվել է ՀՀ պատմության ու մշակույթի հուշարձանների պահպանության վարչության կողմից: Այդ աշխատանքների ընթացքում վերականգնվել են հուշարձանների վնասված երեսապատերը, վերանորոգվել են շենքերի քարե տանիքները, պարիսպը, տարածքում կատարվել են բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

1996թ., իր ճարտարապետական և պատմական բացառիկ արժեքների շնորհիվ, վանքն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում:



Գրականություն

1. Զալալյան Ս., Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփղիս, 1842:
2. Երզնկյանց Ռոստոմ-Բեկ, Հնախօսական տեղագրություն Հաղբատայ աշխարհառչակ վանից սրբոյ նշանի, Վաղարշապատ, 1842:
3. Լալայան Ե., Բորչալուի գավառ, «Ազգագրական հանդես», գիրք 7-8, 1901:
4. Եղիազարյան Հ., Ավալերդու շրջանի կուլտուրայի հուշարձանները, Ե., 1952:
5. Սարգսյան Հ. Գ., Հաղբատի մեծ գավիթը, ՊԲՀ, 1975, N 4:
6. Հովհաննիսյան Կ. Սանահին – Հաղբատ, Ե., 1978:
7. Սաղումյան Ս., Գուգարքի մեմորիալ հուշարձանները, Ե., 1980:
8. Ղաֆադարյան Կ., Հաղբատ, Ե., 1963:

arches. Inside of the structure there are stone benches. It is lighted by an open aperture at the center top of the roof.

The monastery complex is fenced, it is spacious and adapted to the rugged area. It partially preserved in its original form. The fence included the main constructions of the monastery. The fence was built of stone and baked bricks with lime cement. In the western part, the round massive pyramids of fence are preserved. Inside the fence and on the surrounding areas, there are other monastic structures, churches, bridges, water-mill, places of pilgrimage, monastic cells and numerous khachkars. There are also several churches, chapels, the Kayan Berd fortress and the Kusanats Desert, the water spring and etc.

The monastery complex was renovated several times by the the Agency of Protection of Historical and Cultural Monuments of RA. During the renovation works the damaged facades of the monuments were reconstructed, the stone roofs of the structures and the fence were repaired, the improvement and landscaping works were conducted in the area.

Due to its unique architectural and historical values, in 1996 the complex was included in the list of the monuments under the protection of UNESCO.



Bibliography:

1. Jalalyan S., «Traveling to the Greater Armenia», part I, Tbilisi, 1842.
2. Lalayan E., «The province of Borchalu», «Ethnographic Review», book 7-8, 1901.
3. Yeghiazaryan H., «The cultural monuments of Alaverdi region, Y., 1952.
4. H. Sargsyan, «The great gavit of Haghpats», HPJ, 1975, N 4.
5. Hovhannisyan K., «Sanahin – Haghbat», Y., 1978.
6. Saghumyan S., «The memorial monuments of Gugark», Y., 1980.
7. Ghafadaryan K., Haghbat, Y., 1963.

ԳԵՂԱՐԴԻ ՎԱՆՔ THE MONASTERY OF GEGHARD	2
ՉՎԱՐԹՆՈՑԻ ՀԱՄԱԼԻՐ THE CATHEDRAL OF ZVARTNOTS	12
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ THE MOTHER SEE OF HOLY ECHMIATSIN	20
ՍԲ. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑԻ THE CHURCH OF ST. GAYANE	34
ՍԲ. ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑԻ THE CHURCH OF ST. HRIPSIME	38
ՍԲ. ՇՈՂԱԿԱԹ ԵԿԵՂԵՑԻ THE CHURCH OF ST. SHOGHAKAT	42
ՍԱՆԱՀԻՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ THE MONASTERY COMPLEX OF SANAHIN	46
ՀԱՂԲԱՏԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ THE MONASTERY OF HAGHPAT	54



ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ
ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF CULTURE OF THE REPUBLIC OF ARMENIA
"SERVICE FOR THE PROTECTION OF HISTORICAL ENVIRONMENT
AND CULTURAL MUSEUM RESERVATIONS"
NON COMMERCIAL STATE ORGANIZATION